



# ԱՆԱՀԻՏ

## ՀԱՆՐԻՍ ՎՄՄՆԱԿ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԲԵՆՍԱԿԱՆ

Գ. ՏՄԻԻ


ՕԴՈՍՏՈՍ 1901

ԹԻԻ 8

ԲԱՐԻԶ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Ե՞՞՞՞ Ե՞՞՞՞ հոգիին չճարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած յՅին բնութիւնը չնղածի պէս պիտի ըլլար :

• Ժ. ՄԻՇԼԷ



# ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Վ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1901

ԹԻԻ 8



ՄԽԻԹԱՐ

## ՄԽԻԹԱՐԻ ԳՈՐԾԸ

— 0 0 —

Այն հանդիսութեանց առթիւ, որով վենեակի Մխիթարեանները երկուհարիւրամեակը կը սօնեն իրենց տանը հիմնադրին, կ'ուզեմ ի վեր հանել, աւելի մանրախոյզ քննութիւնով մը

քան ինչ որ կրցած եմ ընել այսուկը ասկից առաջ երեւցած ուրիշ յօդուածներու մէջ, բուն իսկ նկարագիրը ճիգին զոր փորձեց եւ յաջողցուց մտքի ու կամքի այդ հերոսը:

Մխիթարի եւ իր յաջորդներուն գործը կը բաժնուի երկու հասուածներու, որոնց առաջինը կը կայանայ արդի Հայութիւնն իր անցեալին ոգումովը վերականգնելու, եւ երկրորդը՝ հայ միտքն արեւմտեան քաղաքակրթութեան հետ անմիջականորէն ու մշտապէս հաղորդակից ընելու մէջ. գործունէութեան այդ երկու ճիւղին մէջ ալ, Մխիթարի առնը կ'ստարած է անգնահատելի դեր մը, բայց երկրորդին մէջ է որ պէտք է տեսնել Մխիթարեանց ճշմարիտ փառքի տիտղոսը: Մխիթար եւ իր յաջորդներն ամենէն մեծ սատարը եւ զած են արդի Հայութեան «եւրոպացումին»:

Արդարեւ, հայ մտքին հինաւուրց յիշատակարանները փոշիներու տակէն արթնցնելու եւ անոնց լոյսի մէջ դբուելովը հայ ժողովուրդն իր բարոյական քունէն ցնցելու գործը՝ Մխիթարի միաբանութեան հետ, եթէ ոչ անոր չափ եւ անոր պէս, կ'ստարած են ուրիշ կեդրոններ ալ, — Երուսաղէմի, Էջմիածնայ միաբանութիւնները, եւն. — բայց ոչ մէկ հայկական հաստատութիւն այնքան ինքնատիպ, այնքան խորունկ ու տեւական ազդեցութիւն մը չէ ունեցած Հայոց

վրայ՝ արեւմտեան ոգիին , ճաշակին , բարքե-  
րուն մեր մէջ տարածման տեսակէտով՝ որքան  
Մխիթարի տունը :

Սկիզբէն ի վեր հայ ժողովուրդը բնագոյնական  
ձգտում մը ցոյց տուած է Արեւմուտքի գա-  
ղափարներն իւրացնելու . Տիգրան Բ . իր  
մայրաքաղաքը յոյն արուեստին ու յոյն մը-  
տածման գեղեցկութիւններովն ուզեց զարդա-  
րել . Վռամշապուհ եւ Սահակ հայ պատանու-  
թեան ծաղիկը Յունաստան զրկեցին՝ արեւ-  
մտեան կաղապարին մէջ ձուլելու . Խորենա-  
ցին , Նարեկացին , Լամբրոնացին , Շնորհալին  
իրենց գործին արեւելեան մկանուտ ու թանձր  
խորքին վրայ արեւմուտքի ոգւովը ձը-  
կած ու յղկուած մտքի մը շնորհը երեւան  
բերին : Բայց երբեք հայ ժողովուրդը չէր ունե-  
ցած մշտական կեդրոն մը Արեւմուտքի մէջ ,  
որ մեթոտով եւ տեւականօրէն միութեան գի-  
ծը կազմէր Արեւմուտքին եւ իր միջեւ : Այդ  
կեդրոնը Մխիթարն է որ հիմնեց : Եւ անոր  
բարիքը աւելի մեծ եղած է մեզի համար քան  
ինչ որ շատերը կը կարծեն :


Մեթոտի , յստակութեան , կարգաւորութեան  
պակասը ամենէն զգալի եւ ամենէն ծանր թե-  
րութիւնն է որ ի յայտ կուգայ քաղաքակա-  
նութեանն ինչպէս եւ գրականութեանը մէջ  
մեր ժողովրդին , որ , ինչքան ալ միշտ մղուած  
ըլլայ դէպ ի Արեւմուտք , ստիպելի տարտա-  
մութենէն ու թանձրութիւնէն շատ բան պա-  
հած է միշտ : Այն սերտ շիտմը զոր Մխիթար  
եւ իր յաջորդներն ունեցան եւրոպական աշ-  
խարհին հետ , իրենց փոխանցեց այն մեծ յատ-  
կութիւնը որով Արեւմուտքը յաղթեց Արեւել-  
քին , — մէթոտով գործունէութեան յատկու-  
թիւնը : Բառարանները , կրօնական ու պատմա-  
կան գրքերը , հնախօսական ու աշխարհագրա-  
կան ուսումնասիրութիւնները , եւրոպական  
հրաշակիւտներու խնամոտ թարգմանութիւն-  
ները , ճաշակաւոր ու հմտալից հեղինակու-  
թիւնները , Հայոց հին հեղինակներու գործե-  
րուն կոկիկ սպագրութիւնը , մեր մէջ կը մտցը-  
նէին՝ կարելի է ըսել առաջին անգամն ըլլա-  
լով՝ այդ մեծ ու բեղուն նորութիւնը կանո-  
նաւոր , գիտակից , ներհուն աշխատութեան զոր  
Արեւմուտքը սորվեցուց Մխիթարեաններուն

եւ զոր անոնք իրենց հայրենիքի եղբայրներուն  
սորվեցուցին :

Մեթոտով գործունէութեան , կանոնաւոր , դի-  
տակից աշխատութեան այդ ձգտումն է որ Մխի-  
թարի եւ իր յաջորդներուն գործը աւելի կա-  
տարեալ եւ յստակ կը կայուցանէ քան է . դա-  
րու եւ ժԲ . դարու հայ մտաւորականներու գոր-  
ծը . Հայր Արսէն եւ Հ . Եղուարդ Հիւրմիւզ շատ  
աւելի լայն սահմանի մը մէջ արեւմտեան մտա-  
ծումն ու գեղեցկութիւնը ներմուծած են հայ  
մատենագրութեան մէջ , քան Ե . դարու բոլոր  
թարգմանիչները մէկանց , որոնց ճիւղը , կրօ-  
նական մտահոգութիւնէն տիրապետուած , միա-  
կողմանի եւ սահմանափակ է եղած հարկաւո-  
րաբար , մինչդեռ Մխիթարեաններն սմբողջ  
Արեւմուտքը բացին հայ մտքին առջեւ՝ իր հին  
ու նոր ամեն ճեսակ ճոխութիւններովը :  
Չամչեան որ միեւնոյն հայրենասիրական ձգ-  
տումով ու ծրագրով վերսկսած է Խորենացիին  
գործը , անշուշտ շատ աւելի ընդարձակ , բազ-  
մաբարդ ու լիալիր ձեւով մը կատարած է  
զայն , եւ արդի Հայութիւնը եթէ խրոխտանց-  
եալի մը զաւակն ըլլալուն գիտակցութիւնն  
ունեցած է՝ ատի կը պարտի ոչ թէ Խորենա-  
ցիին , որուն պատմութիւնը վերջին ժամա-  
նակներու մէջ բանասէրներու ուսումնասիրու-  
թեան նիւթ ընծայած է աւելի՝ քան ժողովրդին  
մէջ ուղղակի կարգացուած , այլ Չամչեանի  
գործին եւ անկից ծնած բազմաթիւ Հայոց պատ-  
մութեան դասագրքերուն : Գալով «ուսումնա-  
սիրութիւններու» , մեր բոլոր հին գրականու-  
թեան մէջ հազիւ քանի մը հատ կարելի է գրո-  
նել որ այդ անունին կարենան արժանանալ .  
Մխիթար Հերացիին , Անանիա Շիրակա-  
ցիին գիտական աշխատութիւններէն , Մխի-  
թար Գոշի Դատաստանադրէն , Երզնկացուց  
Քերականութենէն , եւ կարգ մը բժշկարաննե-  
րէ ու սրբազան գրքերու մեկնութիւններէ  
գատ , ուրիշ ոչինչ թողած են մեր նախնիք  
բայց եթէ բանաստեղծական ներշնչման յաճախ  
վսեմ բայց գրեթէ միշտ ձեւով անկարգ եւ ան-  
կատար արտագրութիւններ , պատմական քրո-  
նիկներ՝ մեծ մասամբ խառնափնթոր , տարտամ  
ու ճոռոմ : Մխիթարեանները , ուղղակի ազ-  
գեցութիւնը կրելով յոյն-լատին աշխարհին ոգ-

ւոյն , ամէն ճիւղի մէջ լոյս ու կարգ մտցուցին . Մխիթար , Չամչեան , Ինճիճեան , Աւգեր , Սոմալ , Բագրատունի , Հիւրմիւզ , Ալիշան յօրինեցին առաջին կանոնաւոր քերականութիւնը , բառարանը , պատմութիւնը , աշխարհագրութիւնը զոր Հայերն ունեցած ըլլան երբեք , հաստատեցին ամենէն կատարագործեալ տպարանը , հրատարակեցին նախնեաց գործերը ամենէն խնամալ տպագրութեամբ որ կարելի ըլլար իրենց ասենը , Եւրոպայի դասական հրաշակերտները Հայոց ծանօթացնելու եւ ինքնագիր արտադրութիւններով Հայոց մէջ բանաստեղծական վերածնունդ մը յասալ բերելու գործը կատարեցին յստակ ու լայն ծրագրով մը որուն պէս ոչ մէկ մատուորական խումբ զեռ չէր ունեցած Հայոց մէջ՝ Հայկէն ի վեր : Մխիթարի տան երկճգումովը՝ աշխատութիւնը բաժնուելով , Վենետիկի Մխիթարեան քղեղեցկագիտական գործունէութիւնը շարունակեցին ծաղկեցնել նոյն ճամբով , իսկ Վիեննայիները , գերման միջավայրին ներգործութենէն տոգորուած , պատմական , լեզուագիտական , հնախոսական ուսումնասիրութեանց կատարմանը մէջ զբիւն այն ամբողջ գիտական խղճմտութիւնն ու ճշգրտութիւնը զոր ո եւ է եւրոպացի գիտուն պիտի զնէր : Բագրատունիի եւ Հիւրմիւզի թարգմանութիւնները առանց շովինութեան ո եւ է մեղադրանքի արժանանալու կարելի է Լրքոնթ տը Լիլի եւ Պոալէրի հանճարեղ ու վճռական թարգմանութիւններուն հաւասար

բարդ ու նուրբ գեղեցկութեամբը Հիւկոյի կամ Պայրընի հաւաքածոյի մը մէջ պիտի կրնային



ՔՂՈՒ ՎՍՅՈՒՆՈՒ Ս ՂԱՅՈՐՈՒ ՎԱՆԳ

տեղ ունենալ : Չամչեանի յիշատակարանը վար էջեր որ , մտածումին խորութեամբն ու ձևին չի մնար Տիտոս-Լիվիոսի մը գործէն : Եւ ո եւ է


եւ բոլորացի գիտնական պիտի չվարանէր ստորագրել Ինճիճեանի, Քաթրճեանի, Այտնեանի, Քարաքաչեանի, Տաշեանի աշխատութիւնները : — Ու այդ յտակ ու մեթոտաւոր ոգիին շնորհիւն է որ Մխիթարի հիմնած շէնքը մնացած է եւ պիտի մնայ միշտ կանգուն, ամուր եւ կենդանի, հակառակ միջակութեան փակագիծնէրու որոնք չեն կրնար երկար տեւել այդքան վեհ աւանդութիւններով հարուստ տան մը մէջ :

Այդ գործը կատարած են Մխիթարեանք ոչ միայն իրենց հրատարակած գրքերով, այլ եւ — ու աւելի ընդարձակ ու կենսունակ ձեւի մը մէջ, — իրենց հասուցած աշակերտներովը : Պէտք չունիմ հոս մանրամասնօրէն բացատրելու զերը զոր կատարած են արդի Հայութեան կազմակերպումին մէջ՝ Պէշիքթաշլեան, Հեքիմեան, Թերզեան, Մերենց, Մամուրեան, եւն : Անոնք հիմնած են հայ թատրոնը, անոնք զըրած են ամենէն յղկուած ու նրբացած, ամենէն «արուեստագէտ» ձեւով բանաստեղծութիւնները զոր Հայերէն լեզուն ունեցած ըլլար մինչեւ իրենց օրը : զարգացուցած են վէպն ու լրագրական քրոնիկը, ոռմանթիկ գրականութիւնը ծանօթացուցած են Հայոց՝ անթերի թարգմանութիւններով : Մխիթարեանց աշակերտներն են վարձեալ որ զխաւսը նախաձեռնութիւնն ունեցած են Միացեալ Բնկերութեան՝ այսինքն ա.ս. դարու ամենէն կարեւոր հայ մարմիններէն մէկուն՝ հիմնարկութեանը : Եւ իրենց զերը անհուն է թրքահայ հասարակութեան բարքերուն եւ բոլորաման մէջ, եւ բոլորացիներէ անջատ ապրող, իրենց արեւելցու թեանը մէջ կղզիացած Հայոց զանգուածին մէջ, այդ եւ բոլորային հասնող, զաստիարակութեամբ ու հոգեով բոլորովին եւրօպացած երիտասարդները, իրենց կաթոլիկութեանը պատճառովն ալ սերտ յարաբերութեան մէջ՝ եւ բոլորացի տարրին հետ, մեծապէս նպաստած են իրենց հանրային գործունէութեամբն ինչպէս անձնական կեանքովը, հայ ժողովրդին մէջ եւ բոլորական ձգտումներու, կենցաղաւորութեան եւ ճաշակի տարածմանը :

«Արուեստագէտ», ու «եւրօպացի», անա ինչ որ եղած են Մխիթարեաններն ու իրենց աշակերտները : Մեր բարքերուն — մանաւանդ

Պոլսահայոց բարքերուն — թանձր գոեկութեանը մէջ, անոնք ազատութեան ու զեղարուեստի մթնոլորտի մը մէջ զարգացող ազգերու հոգին, ոճը, ձեւերը բերած են : Եւ «զիւցաղնական» տարրը մացուցած են անոնք մեր մէջ : մեր ամբողջ հին մատենագրութիւնը ողբ մըն է, — նոր ժամանակներու մէջ, ԺԹ. դարու սկիզբը, Հայերը, Մխիթարեաններէն դուրս, գրեթէ ուրիշ բան չէին արտադրած բայց եթէ ծթած բանակալիներ, վարնոց ծագածութիւններ ու տափակ վիպասանութիւններ : Մխիթարեանք, առաջին անգամ ըլլալով, հնչեցուցին հայ լեզուով այն անսական շեշտերը զոր Հոմեր, Վիրգիլ, Սոփոկլէս արձակած են Արեւմուտքի մէջ, Մխիթարեանք առաջին Հայերը եղած են որ զիւցաղնագրութիւնն ու ողբերգութիւնը մացուցած են հայ մատենագրութեան մէջ, այսինքն գրականութեան երկու ազնուագոյն ու վեհագոյն ձեւերը : լալկան հայերէնը իրենց մատեներուն տալ շեփորի գոչիւններ, զբաժի շկահիւններ, սուրի շաչիւններ արձակած է : Չամչեան, իր յաւիտենական գիրքերուն համանման : Ալիշան Վարդանը, Տրդատը, Աշոտ Երկաթը երգած է պաղպատէ տողերու մէջ : Պէշիքթաշլեան, Թերզեան, Հեքիմեան իրենց զիւցաղնական խաղերովը՝ մեր ժողովուրդն ընտելացուցած են այն արի զբացումներուն, այն խրոխտ լեզուին, այն յանդուգն արարքներուն որոնք Ալֆիերական կամ Քորնէյլական կամ Հիւրոյական անձնագրութիւններուն յատուկ են : Եւ ի՞նչ սիրուն նորութիւն գարձեալ, անկաշկանդ ու բացարձակ զեղեցկամտութիւնը զոր սիգաբար դրօշած են Բագրատունիներն ու Հիւրմիւզներ : Ըմեր պարչիշտամուլ, կրօնամուլ, բանք՝ կեղծաւորամուլ բըքերուն մէջ, անոնք վերածնութեան արուեստագէտ-կրօնաւորի իրենց հոյակապ ափսարը կանգնեցուցած են : Այդ վեղարարները, որ առանց տող մը ջնջելու մեղի տուած են Հոմերոսն ու Վիրգիլն ու Միլտոնն ու Ուրբախտը՝ իրենց խոհական ինչպէս եւ հեշտական էջերովը,

որ սէրն ինչպէս հայրենիքը , Աստուած ինչպէս եւ անոր արարածներուն՝ գեղեցկագոյնը՝ կինը՝ երգած են ասանց ու եւ է յիմար ամօթխածութեան , ըմբռնելով որ Գեղեցկին պաշտամունքը ամէն նիւթ կը սրբագործէ , այդ



Հ . ԱՐՄԷՆ ԲԱԳՐՍՏՈՒՆԻ

իրենց սքեմին տակ արևուտ ու վարդափայլ հողի մը մնուցանող երգիչները՝ երիտասարդութիւն , քաջութիւն ու շնորհ են բերած մեր քիչ մը պատուած , կքած ու դառամած ժողովրդին : Մխիթարեաններու «կաթոլիկութեան» հանգամանքը յիշեցի . անհրաժեշտ կը նկատեմ ծանրանալ ասոր վրայ եւ ատոր բաժինը ճշգիւ Մխիթարեանց ճիգերուն բեղմնաւորմանը մէջ : Մխիթարեանց մասին խօսող Հայերէն — Լուսաւորչական Հայերէն — շատերը , նոյն իսկ գանոնք ներքողած ատեններն՝ ծամածուծութիւն մը կը պահեն միշտ անոնց կաթոլիկութեանը համար : Էէտք չէ մտնալ այն Պոլսոյ տեսակ մը վայրենիները որոնք Պեշիքթաշլեանին իսկ դործը պաղուծեամբ նկատած են երկայն ատեն որովհետեւ «կաթոլիկ» էր անոր հեղինակը , արդես կը կարծեմ թէ կաթոլիկութիւնը սատար մը աւելի եղած է՝ ամբողջական իրականացմանը համար Մխիթարեանց քաղաքակրթական ծրագրին :

Մխիթարեանք , կաթոլիկ ըլլալով , աւելիներքնապէս ու մտերմօրէն թափանցած ու իւրացուցած են եւրոպական , մասնաւորապէս լատին քաղաքակրթութիւնը , այսինքն ամենէն յստակ , ամենէն լուսաւոր ու հաւասարակշիռ քաղաքակրթութիւնը : Գէտք է ճշդեմ որ նոյն ինքն կաթոլիկ կրօնքին չէ որ կը վերադրեմ ու եւ է առաւելութիւն ուրիշ կրօնքներու վրայ , կամ ու եւ ներքնագոյ յատկութիւն՝ աղբի մը քաղաքակրթութեանը գիւրացնող . ընդհակառակն , իբր կրօնք , ամենէն քիչ սիրածս է կաթոլիկութիւնը , շատ «գինուորական» եւ շատ «աշխարհիկ» կրօնք մը . մեր հայ եկեղեցին՝ ինծի համար՝ շատ աւելի բնականօրէն կը համապատասխանէ քրիստոնէական ողիին , եւ իր անկեղծ , զարգ ու ժողովրդական ճշգտումովը շատ աւելի գեղեցիկ է իբր «քրիստոնէական» հաստատութիւն : Բայց կաթոլիկութիւնը Մխիթարեաններու համար հզօր կապ մը կազմած է լատին աշխարհին հետ , իրենց յարաբերութիւններն աւելի սեղմած , մտերմացուցած եւ ընդարձակած է անոր հետ . այս տեսակէտով է որ զայն կը համարեմ Մխիթարեաններու գործը գիւրացնող տարր մը : Չեմ գիտեր թէ խորին համոզումով մը կաթոլիկութեան յարած ըլլալուն համար էր որ Մխիթար արքան իր միաբանութիւնը պապին հովանուոյն տակ դրաւ , թէ գիւանադիտական մը տածումէ մը լսկ մղուած . երկու պարագային մէջ ալ չեմ մեղադրեր վինքը . նախ , մարդ մը բացարձակապէս ազատ է յարելու այն կրօնքին որ իրեն ամենէն գեղեցիկը կը թուի , բաւ է որ իր ազգային կրօնքէն տարբեր կրօնքի մը յարելը գինքը չմղէ հակազգային զգացումներու , — ինչ որ տեսնուած է շատ մը ուրիշ հայ կաթոլիկներու մէջ (միշտ պիտի յիշենք կիլիկիոյ Ունիթորներուն ատեն երեւան ելած հրէշային Վասիլիոսը , որ ամբողջ կեանքը անցուց հալածելով հայ եկեղեցին , հայկական ծէսերը , նոյն իսկ հայերէն լեզուն , եւ որ ուզեց որ իր գերեզմանին վրայ դրոշմուի սառճրագործ եւ ապուշ վերտառութիւնը՝ «Վասիլիոս , թշնամի Հայոց ազգին») , ինչ ալ եղած ըլլայ Մխիթարի գրգիռը , իր արարքը շատ ուշիւ է եղած եւ գործնական , որովհետեւ կաթոլիկ Խտալիային

մէջ՝ ասկից երկու դար առաջ մահաւանդ՝ լուսաւորչական միաբանութիւն մը չէր կրնար յաջողիլ . իր վանքը, կաթողիկ , գտած է ամենամեծ յաջողութիւնը զոր կրնար գտնել . եւ Մխիթարեանց կաթողիկ ըլլալը պատճառ եղած է միանգամայն որ Իտալիոյ, Ֆրանսայի, Աւստրիոյ մէջ մտաւորական, կղերական, քաղաքական կարգ մը բարձր շրջանակներ աւելի սերտ համակրութեամբ մը վարուէին այդ միաբանութեան հետ, եւ՝ այդ միաբանութեան վրայէն՝ ամբողջ հայ ազգին համար սերունդը զգացումներ տածէին: Անտարակուսելի է որ եթէ Նաբոլէոն Գ. ի «կաթողիկ» Ֆրանսան, իր դիւանագէտներովը, գրադէտներովը, բանաստեղծներովը, այնքան ջերմ համակրութիւն մը ցոյց տուած է հայ ժողովրդին եւ հետաքրքրուած է անոր անցեալովն ու ներկայովը, ասոր պատճառն եղած է զլիսաւորպէս կաթողիկ Մխիթարեան գործիչներու ներկայութիւնը Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ: Եւ նոյնչափ անտարակուսելի է որ Մխիթարեանց կաթողիկութիւնը հակազգային զգացումներու չէ մըղած զիրենք, եւ ազգային տեսակէտով իրենց համար իրական թերութիւն մը չէ կազմած . դիտեմ որ վենետիկի ու վիեննայի վանքէն ելած են կարգ մը հրատարակութիւններ, պատմական եւ կրօնական, որ երբեմն իրենց մէկ քանի էջերուն մէջ վերաւորիչ հանգամանքէ մը զուրկ չեն եղած մեր ազգային եկեղեցւոյն համար. եւ բնաւ երբեք մտքէս չ'անցնիր թոյլ տալ ուր է մէկուն որ այս տղերէն հետեւ ցընէ թէ ներելի կը գտնեմ Զնտոյեանի մը այսօր կատարած այլանդակ գերը՝ զոր հակազգային եւ հակամարդկային կը նկատեմ: Բայց սկիզբէն ի վեր իրենց ունեցած գործունէութեանը ամբողջութիւնը նկատելով, Մխիթարեանները, թէպէտ թունգ կաթողիկ, աւելի «հայ» են եղած քան կաթողիկ: Վենետիկի Մխիթարեանց աշակերտներն են որ յարուցիչները եղած են հակահասունեան շարժումին, եւ ջախջախած են կաթողիկութիւնը հայատեցութեան տանող պիտակի հայ-կաթողիկներուն ջոկատը: Իրենք են որ արտագրած են Պէշիքթաշլեանը, այդ զմայլելի ճարմանդը Մայր-Հայութեան եւ իր հայ-կաթողիկ զաւկին միջեւ: Եւ մենք պէտք է

մղուինք արդէն ամէն բան իրենց ներելու երբ մտածենք թէ իրենց ազդեցութեամբն է որ մեր ցեղն ունեցած է՝ այս դարուս մէջ՝ իր ամենէն ներքացած ու շնորհալի մտքերը, բացարձակապէս, անխառնօրէն «եւրոպացի», («եւրոպացի» բառին լաւագոյն իմաստովը), — Պէշիքթաշլեանը, Աղամեանը, Տիգրան Երկաթը, այսինքն Հայեր զոր առանց ուր է վարանումի կրնանք Անտրէ Շէնիէներու, Սալվինիներու եւ Անաթոլ Ֆրանսներու քովը դնել:

•••

Անշուշտ, ըսել չեմ ուզեր թէ Մխիթարեանք աւե՛ն քան ըրած են արդի Հայութեան վերակեն դանացման մէջ, եւ թէ առանց իրենց՝ հայ ժողովուրդն այսօր բացարձակ խաւարի մէջ պիտի թաւալէր՝ իր անցեալին անգիտակ եւ իր լեզուն կորսնցուցած: Ոչինչ աւելի անախորժ է արդէն քան փքուն ինքնահիացումը որով կարգ մը արդի պզտիկ Մխիթարեաններ հայ ազգութեան տարածերժ աշատարարի եւ վերածնիչի գերն իրենց տանը կը վերադրեն, հայ ժողովուրդը, տարօրինապէս ճկուն, գիմացկուն եւ մշտակենդան, որ դարերէ ի վեր իր ինքնութիւնը պահած է՝ առանց Եւրոպայի մէջ կեդրոն մը ունենալու, անտարակոյս պիտի կարենար նորէն, նոյն խի առանց Մխիթարեաններուն, ուղղակի ազգուելով եւրոպական հոսանքէն որ այս դարուս ողողեց ամբողջ Արեւելքը, արթննալ իր բարոյական թմբու թեւէն, վերականգնել իր լեզուն եւ իր դրականութիւնը: Բայց այդ զարթումը առանց Մխիթարեաններուն՝ աւելի դանդաղ պիտի ըլլար, վերականգնումի ճիգը աւելի խարխափուն, անստոյգ ու տաժանելի Մխիթարի տունը դիւրացուց ու կանոնաւորեց հայ ազգին ճիգը, — եւ հոտ է իր արժանիքը:

Մխիթարեանց դորձը շատ մեծ է, բայց ամբողջ դորձը չէ. անոնց հետ զուգահեւարար, Պուլիս-Իզմիրի հայ լուսաւորչական մտաւորականներու գործունէութիւնը, եւ մանաւանդ ուսահայ գործիչներու դերը, ահագին սեղ ունի արդի Հայութեան բարոյական վերականգնման մէջ: Զամբարձեան, Միսաքեան, Գրիգոր Օտեան, Ասկանեան, Յարութիւն Սվաճեան, Պարոնեան և

Դուրեան, Չիլիկիբեան, Կոստանեան, Տէտէեան՝ Պոլսոյ եւ Իզմիրի մէջ, Արովեան, Նազարեան, Նալբանդեան, Բարխուզարեան, Բաֆֆի, Արծրունի, Քամառ-Քաթիպա, Քերոբէ Պատկանեան, Մկրտիչ Էմին՝ Մոսկուայի եւ Թիֆլիսի մէջ, կատարած են գործ մը որ ոչ նուազ կարեւոր է քան Մխիթարեանց գործը, եւ ուրիշ տեսակէտով մը աւելի իսկ կարեւոր: Մխիթարեանք, վանքի մարդիկ, գրքի մարդիկ, ժողովուրդէն եւ անոր ետեւն, բարախուն կեանքէն անջատ, հարկաւորաբար պիտի ունենային՝ գլխաւորապէս՝ «գրքի» գործունէութիւն մը: Մոսկուայի, Պոլսոյ, Թիֆլիսի եւ Իզմիրի գործիչները, ժողովրդին մէջ ապրած, կրօնական կամ վարդապետական ո եւ է կապէ գերծ, եւրոպական քաղաքակրթութիւնն ընդունած՝ ոչ թէ կղերական, դիտական, աշխատանոցական սահմանի մը մէջ լինի, այլ իր ամենէն կենսախայտ ու «նոր» ձեւին մէջ, կատարած են գործ մը աւելի կենդանի, ժողովրդին ամբողջական պէտքերուն աւելի գոհացում տուող: Մխիթարեաններուն<sup>(\*)</sup> գործը՝ ընդհանրապէս՝ «գիրք» կը հոտի. եւ բընականաբար կը ձգտի միշտ դէպ ի հինը, դէպի գալսականը, եւ երբեմն նոյն իսկ ինչ որ միեւնոյն բանը չէ, դէպ ի սնամէջ հետտրականը: Բարբառունիները, Հիւրմիւլիները, Ինճիճեանները, Ալիշանները Հայաստանը երգած են՝ առանց զայն տեսած ըլլալու, առանց մտահոգութիւնն ունեցած ըլլալու երթալ անձամբ զայն ճանչնալու. եւ պէտք չէ մոռնալ որ աշխարհաբարին անխուսափելի տիրապետումը չեն ըմբռնած. Ալիշան՝ իր այնքան սիրուն «Յուշիկներ»ը գրելու ատեն՝ «աղտոտ քուրջի կտոր» անուանած է աշխարհաբարը, եւ «չուզելով» գըրած է էջեր, որոնք, սակայն, «Նահապետի երգեր»ուն հետ, հայ ժողովրդին իրեն համար ունեցած երախտագիտութեանը մէջ ամենէն մեծ

(\*) Հոս Մխիթարեան ըսելով կ'ակնարկեմ միայն «վանական» գործիչներուն. իրենց Մուրատ-Ռեփայիլեան վարժարանին մէջ հասուցած աշակերտներուն գործը, թէպէտ միշտ «դասական», «գրական» երանդ մը կը պահէ, արդի կեանքին, ժողովրդական գործունէութեան հետ սերտ կապեր ունեցած է յաճախ, եւ նոյնչափ արդիւնքն է Պոլիս-Իզմիրի միջավայրին ու տեղական գործիչներու ազդեցութեանը որչափ Մխիթարեան վանքին ներգործութեանը:

բաժինը կը կազմեն: Թիֆլիսի, Մոսկուայի, Պոլսոյ եւ Իզմիրի մտաւորականներուն գործը «կեանք» կը հոտի. անոնք հաստատած են բուն կապը, կենդանի կապը, ժողովրդին ու գրագէտներուն մէջը. անոնք կազմակերպած են մեր արդի լեզուն, մեր արդի գրականութիւնը՝ իր արդի ձեւին մէջ — վէպը Բաֆֆիով, լրագրութիւնը Արծրունիով, Յարութիւն Սվաճեանով, երգիծանքը Պարոնեանով, իմաստասիրական գրականութիւնը Միսաքեանով, «նոր» բանաստեղծութիւնը Դուրեանով եւ Քամառ-Քաթիպայով, եւն:

Բայց Մխիթարի տունը միշտ կը պահէ իր «առաջնութեան» արժանիքը: Ան է որ առաջին ջանք բարձրացուցած է, ԺԸ, դարու սիւղըն իսկ, հայ ժողովրդին վրայ համատարած ծառայող խաւարին մէջ, երբ մեռելութիւն կը տիրէր Մոսկուա ինչպէս Պոլիս, Թիֆլիս ինչպէս Իզմիր: Բոլոր միւս կեդրոններն այդ ջանին սըրսկած պայծառութենէն ազդուած են իրենց առաջին սթափմանը մէջ. Արովեան, հմայուած Մխիթարի տանը հրապոյրէն, քիչ էր մնացած որ Ս. Ղազարու վանքն երթար՝ միաբան ըլլալու մեր բոլոր այն բանաստեղծները որ հայ անցեալը երգեցին, Չամչեանէն ազդուած են՝ ուղղակի կամ անուղղակի կերպով. Միսաքեան պաշտոզ մըն էր եւ հետեւող մը Հիւրմիւլիներուն եւ Բագրատունիներուն: Չամուրճեան պատկառանքով կ'արտասանէր Մխիթարեանց անունը. Դուրեան իր վարպետները կ'անուանէր Ալիշանն ու Պեչիքթաշլեանը. եւ իր Վարագի վանքին խորէն, Խրիմեան Հայրիկն իր գրական առաջին փորձերը «Բազմավէպ»ին կը զրկէր իր սքանչացումին հետ, ու «Հրաւիրակ Այրարատեան երկրին»ն ու «Հրաւիրակ արքայութեան երկրին»ը կը գրէր՝ հետեւելով Վենետիկէն բղխած գիւցազներգական մատենագրութեան:

Եւ յետոյ, Մխիթարեանք ունեցած են արուեստի սէրը, կատարեալին, նրբացեալին, յըզկուած ին ձգտումը, նաշակի մտահոգութիւնը, — այնպիսի աստիճանով մը եւ ձեռով մը զոր հայ ժողովուրդը, միշտ շատ հզօրապէս ներշնչուած ու խորազգաց, բայց միշտ քիչ մը «պաշը-պոզուք»՝ արտայայտութեանը մէջ, երբեք չէր ունեցած, բաց ի մէկ քանի ոսկի բա-

ցառութիւններէ, ինչպէս Նարեկացին, Համբրոնացին, Եղիշէն, եւ այն մեծ արուեստագէտները որ Աստուածաշունչին ու Ոսկերերանին գործերուն հայերէն թարգմանութեան հրաշակերտը արտագրեցին: Մինչեւ ժ.թ. դարու կէսը, հայերէն լեզուով (հին հայերէնով) երեւցած ամենէն անթերի եւ խնամուած աշխատութիւնները, Մխիթարեանց գործերն են եւ զած. ուստանայ ու թրքահայ գրագէտներու գործերը, յաճախ կը գերազանցեն Մխիթարեանց արտագրութիւնները՝ կենդանութեան, նորութեան, ինքնատուութեան կամ անմիջական օգտակարութեան տեսակէտով, բայց ոչինչ կարելի է գտնել անոնց մէջ որ այնքան «կատարալ» ըլլայ եւ այնքան նուրբ, այնքան «եւրոպական» որքան Բագրատունիի եւ Հիւրմիւզի թարգմանութիւնները, Ալիշանի «Հարսներգ»ը, Պէշիքթաշլեանի գրաբար եղերերգները:

Այն պահուն ուր Վենետիկի միաբանութիւնը կը տօնէ իր մեծ հիմնադրին յոբելեանը, այդ միաբանութիւնը դժբաղդաբար չունի այլեւս այն դիրքը, այն հեղինակութիւնը զոր ունէր ասկից յիսուն տարի առաջ. այսօր, Մխիթարեաններէն գուրս կատարուող հայկական գործունէութիւնը՝ իր ամէն ճիւղերուն մէջ՝ աւելի կենսունակ, աւելի շահեկան եւ աւելի հզօր է քան այն զոր Մխիթարեանք կը շարունակեն կատարել. Հայութիւնը Եւրոպային ծանօթացնելու, Հայոց անցեալը հետզհետէ աւելի մանրամասն ու ճշգրիտ կերպով Հայոց ճանչցնելու, եւրոպական քաղաքակարթութիւնը Հայոց մէջ տարածելու, եւ հայ մատենագրութիւնն ու լեզուն կատարելագոյն ու նորագոյն ձեւի մը հասցնելու ճիգը այսօր աւելի տեղի կ'ունենայ Մխիթարեաններէն գուրս քան անոնց ձեռքով, եւ Մխիթարեաններն իրենք են որ այսօր կը կրեն — շատ անբաւական կերպով — իրենցմէ գուրս կատարուած այդ գործունէութեան ազդեցութիւնը:

Բայց այս բոլորը բնաւ երբեք արգելք մը պիտի չըլլայ անշուշտ որպէս զի հայ ժողովուրդը ամբողջութեամբ իր սրտին բովանդակ հրախտագիտութիւնն ու գորով բերէ թափէ Ա. Ղազարու վանքէն դողտր սեմին վրայ այս յուզիչ ու մեծ յոբելեանին առթիւ, որուն

մէջ կը տօնուի երկու դարու հսկայ գործ մը եւ այդ գործին վսեմ հեղինակը, հայ ցեղին ամենէն հզօր զաւակներէն մէկը, Մխիթար:

Սրիմեան Հայրիկը որոշեր է էջմիածնայ միաբանութեան կողմէն Եւրոպայի Հայոց առաջնորդ Իւթիւճեան Գէորգ եպիսկոպոսը զըրկել Վենետիկ՝ իր ձեռագիր մէկ կոնգակովը, եւ ըսուեցաւ. նոյն իսկ թէ հաւանած է եղեր՝ Ա. Ղազարու վանքին յայտնած փափաքին զօհացում տալով՝ հոն զրկել, յորեւանի հանդէսին համար՝ Սեւանայ վանքին Աստուածածնայ հինաւուրց պատկերը, որուն առջեւ Մխիթար ատենով աղօթեր է եւ, ըստ սրտաշարժ աւանդութեան մը, Աստուածածնին խրախուսիչ ձայնն է լսեր: «Նոր Դար»ը խստիւ քննադատած էր Հայրիկը՝ նուիրակսն պատկեր մը Հայաստանի մէկ վանքէն հանելու եւ փութալով կաթողիկ միաբանութեան մը ոտքը զրկելու. որոշումը տուած ըլլալուն համար, եւ կեղեցական պատճառութեանց տեսակէտով, «Նոր Դար»ին զիտողութիւնը իրաւացի էր, եւ Հայրիկը եւ կեցաւ իր որոշումը գործադրելէ: Բայց ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէն Մխիթարի հողոյն հաճոյք պատճառելու այս բուն ձգտումը, որքան ալ ծայրայեղ ձեւ մը զգեցած ըլլայ. աղորէ եւ յուզիչ, եւ միծապէս պատուաբեր կաթողիկոսին ազատ եւ զորովալից սրտին: Սուգի ու զառնութեան այս օրերուն մէջ, պէտք է ուրախաբեր ձայնի մը պէս ողջունել էջմիածնէն եկող այդ հայրական հզօր խանդաղատանքի ողջոյնը, կաթողիկի եւ լուսաւորչականի անիմաստ ու զրուելի եւ ազգայնութեան մեծ զաղափարին ներքեւ այլեւս բացարձակապէս ջախջախուող պատուարին վերեւէն, զէպի Վենետիկ տունը, որուն բովանդակ հայ ժողովուրդը յաւիտեան շնորհապարտ պիտի ըլլայ, որովհետեւ ան դարաւոր ստրկութեան մը միջ լղրճուած մեր ցեղին վրայ Գեղեցկութիւն սփռեց:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ



### ԽԱԶ-ՓՈՒԾ

ՊԱՏԿԵՐ ՊԱՐՄԻԿ ԽԵՂՃԵՐՈՒ ԿԵՍԵՒԷՆ

—o—

(բարգևաճառած արեւմտեան հայերէնի)

Ս

Յուրտ է :

Այս առաւօտ, արեւը դողդաղով երկչոտ կերպով հորիզոնէն դուրս նայեցաւ ու կրկին անհետացաւ : Անոր գունաթափ դէմքը այնքան շփոթած էր, այնքան ողորմելի, սր մարդ զայն դիտած ատեն՝ կը խղճար անոր վրայ :

Ան ալ կը մտէր :

Երկինքը մառախլապատ է : Զիւն չկայ : Բայց օդին մէջ սառնային փոշին արծաթէ թեփուկներու նման կը լողայ, կը լողայ՝ միւսնուսնու մանր աստղիկներով : Այդ աստղիկները, ինչպէս բիւրեղի սուր փշրանք, կը կըտրատեն, կ'այրեն մարդու աչքերը, երեսը, ձեռքերն ու մարմնի բոլոր բաց տեղերը : Անկարելի է շունչ առնել. շունչը կը սառի շրթներուն վրայ : Անկարելի է աչք բանալ. թարթիչները, սառած, փակած են իրարու : Կը փչէ դառնաշունչ քամին եւ ամէն բան կը քարացնէ :

Անյիշատակ ժամանակներէ ի վեր, Թեհրանը այդպիսի ցուրտ առաւօտ մը չէր տեսած : Փողոցներուն մէջ գետինը երկաթի պէս սառեր, ամուրցեր ու ճաթրտեր էր : Սառեր էր ջուրն ալ որ կ'անցնէր ստորերկրեայ խողովակներուն մէջէն : Սառեր էին եւ լճակները որոնք ձեւացած էին սառցատուներուն մօտ : Սառեր էին եւ ծառերը իրենց եղնմտապատ ճիւղերով : Ամբողջ քաղաքը ամբողջ սառնային դանդաղած մը կը ներկայացնէր :

Չնայելով որ օրը բաւական յառաջացած էր, փողոցներուն մէջ զեւ ոչ ոք չէր երեւար : Բոլոր դռները փակ էին : Թոշուներն ալ չէին երեւար. միայն սովատանջ ազուար, չկարենալով երկար համբերել, դուրս նետուեցաւ իր պատասպարանէն, գնաց ո եւ է պարէն մը փնտռել : Անցաւ եղեամով արծաթաջրած կտուրներու վրայէն, լուսամուտներու սառնային նրկարը դիտեց, անցաւ ամայի փողոցներէն, իր ծանօթ աղբանոցներուն նայեցաւ, եւ տեղ մը անորոշ կոյտ մը տեսնելով՝ ուրախութենէն քանի մը պտոյտ գործեց օդին մէջ եւ յետոյ վերէն սլացաւ կոյտին վրայ : Սկսաւ շտապով կացահարել եւ մագիլներով խառնշտկել : Բայց կոյտը սառեր, քար կտրեր, փողոցի յատակին կպեր էր : Երէկ, երբ այդտեղէն անցաւ ջորիներու կարաւանը, այդ կոյտը կակուղ էր եւ

թարմ : Բայց այսօր սոված թոշուներ անոր կարծրութիւնէն դարբի հատիկ մը չկրցաւ հանել : Տհաճութեամբ թողուց կոյտը եւ տհաճութեամբ նետուեցաւ սառնային տարածութեան մէջ :

Միեւնոյն նպատակով իր պատասպարանէն դուրս էր եկեր ուրիշ սովատանջ արարած մը : Բայց ան աւելի բաղաւոր դտնուեցաւ քան թէ ազուար :

Դատարկ փողոցէն միայնակ կ'երթար : Մերթքայլերը կը փութացնէր ու կը վազէր, մերթկանդ կ'առնէր, կը մտածէր եւ յետոյ կը շարունակէր քայլել՝ դանդաղ, անհաւասար քայլերով : Կարծես բնաւ ցուրտ չէր դար, թէեւ մերկ էր բոլորովին : Իր հագուստը միայն երկու կտորէ կը բաղկանար, երկու կտաւէ զենջակներ, որոնց մին մէջքին կապուած, կը սքողէր իր մերկութիւնը եւ մինչեւ ծունկերը կ'իջնէր, իսկ միւսը՝ անխոյթ կերպով ձգուած ձախ ուսին վրայ՝ կը ծածկէր կուրծքին ու թիկունքին մէկ մասը : Մարմնոյն միւս մասերը բաց էին մնացած : Բաց էր գլուխը, որ պատած էր թաղիքի նման թանձրացած մազերով, բաց էին եւ բոպիկ ոտքերը՝ ճաթրտած կրունկներով : Առաւօտեան դաժան ցուրտը կարծես կը վախնար շօշափել այդ թշուառ մերկութիւնը որ մոռալ այլանդակութիւն մը կը ներկայացնէր : Մրտած դէմքը, մոխրապատ մարմինը, մշտական կեղտի խաւը տարօրինակ կը դարձընէին այդ այլանդակութիւնը :

Շրջակայքի ամբողջ դատարկութեան մէջ սպանիչ, անապատական տխրութիւն մը կը տիրէր. բայց ուրախ էր ան, սուլելով կ'երթար, եւ երբեմն խուլ կերպով կ'եղանակէր երգի պէս բան մը : Իր ձայնը փողոցներու խորին լուռութեան մէջ կը լսուէր ինչպէս ծայրայեղ թշուառութեան մը դառն մրմունջը, որ դուրս կը հնչէր իր խորտակուած վաստակաբեկ կուրծքէն . . .

Այդ մարդը «խաղփուչ»(\*) էր :

(\*) «Խաղփուչ» պարսկերէն լեզուով կը նշանակէ «խաղ» (սամոյրենի) հագնող կամ կըրող : Այդ գեղեցիկ թանկագին մորթը կը հաղնին Պարսից ազնուականները կամ շատ հարուստները միայն. իսկ աղքատներու որոշ դասակարգ մը, որ ոչ մէկ հագուստ չունին բացի ցնցոտիներէ, խաղփուչ կոչելը՝ դառն հեղուութիւն մըն է զէպ ի անոնց ծայրագոյն թշուառութիւնը : Խաղփուչները մասնաւոր արծառնաքով մը այդ անունով կը կոչեն իրենց մերկանդամ հասարակութիւնը :

Մարդիկ անար մերկութիւնը ծաղրելու համար զայն խաղ-փուշ կոչեցին: Բայց ան մարդոց պերճախօսութիւնը ծաղրելու համար, բոլորովին մերկ մարմնով կը չըջէր:

Անցաւ պաղարի ընդարձակ հրապարակէն, եւ մտաւ ծածկուած շուկաներէն մէկուն մէջ: Դիշերապահ «հասաս»ները, մուշտակը գլուխնուն քաշած, զեռ կուչէին եկած խանութներու թումբերուն վրայ, եւ կուացած, իրենց սառուցիկ ձեռքերը բռնելէին հրաշէկ մանղալին վրայ: Բայց կրակն անգամ սառել էր:

Շուկան մտնելով, աւելի յառաջ չգնաց: Մուտքին մօտ, արդէն առտուն կանուխէն իր կրպակը բացեր էր անոր ցանկալին, այսինքն մերկ գետնին վրայ նստած էր կեղտոտ մարդ մը, եւ մօտը դրած ունէր խեցեղէն աման մը, որուն բերանն ա՛լ աւելի կեղտոտ կտաւի կտորով մը ծածկած էր: Ձերմ գոլորչին կը բարձրանար ամանին բերնէն եւ օզը կը լեցնէր ակորփելի հոտով:

Շաքարէն աւելի քաղցր է,  
Մեղրէն աւելի համով,  
Շապակեցէ՛ք, աղքատնե՛ր,  
Հատնելու վրայէ...

Այսպէս կը դովարանէր ան իր վաճառքին յատկութիւններն ու բարձր ձայնով պնդներ կը հրաւրէր:

Մեր մոլաչըջիկը մօտեցաւ անոր, հպարտ ձեւով մը ըսելով.

— Խաղ-փուշին բաժինը հանեցէք:

Մախողը երկչոտ կերպով աչքին տակէն նայեցաւ անոր վրայ, յետոյ դողօրջուն ձեռքը տարաւ դէպի ամանի բերանը, վեր բարձրացուց անոր վրայ ձգուած կտաւը, եւ դուրս բերաւ անոր մէջէն մօյզ վարդադոյն քանի մը դընդակներ, մեծ ու փոքր ծաւալով: Ատոնք ուրիշ բան չէին բայց եթէ խորոված ճակնդեղի կոշտեր, որ աղքատներու սոստուան ամենասիրելի կերակուրն է՝ մանաւանդ ձմեռնային օրերուն:

Խաղ-փուշը վար քաշեց իջ վրայ ձգուած զենջակը, ստացած նուէրը անոր մէջ փաթաթեց, եւ առանց շնորհակալութիւն յայտնելու շտապով հեռացաւ:

Ճամբան, հանդիպեցաւ ուրիշ խաղ-փուշի մը: Այս երկրորդ աւելի ծեր էր քան առաջինը, եւ տւելի լաւ հաղուած: Կտաւէ երկար չափիկին վրայէն որ անոր միակ ներքին հաղուտան էր եւ մէջքէն փոկով պնդուած, ձգած ունէր նոյնպէս երկար վերարկու մը որ ծուկերէն բաւական վար կ'իջնէր: Եթէ հարկաւոր ըլլար

աշխարհիս բոլոր հնոտիներու նմուշն ունենալ, անտարակոյս կարելի էր գտնել այդ վերարկուին թանձր բաղադրութեանը մէջ: Ննցոտիներու հարուստ հաւաքածու մըն էր, որ ա՛նոր ուսերուն վրայ վերարկուի պաշտօն կը կատարէր: Եւ այդ բաղամասնեայ հաւաքածուն կազմուած էր տարիներու, շատ տարիներու ընթացքին մէջ: Անոր գերձակը եղած էր ժամանակն ինքն իսկ. բաղդին բերմունքներուն համեմատ երբ պատահեր էր որ զայն կրողը փողոցներուն եւ աղբանոցներուն մէջ լաթի կամ փալասի պատառ մը գտնէր, խնամքով վերցուցած եւ իր վերարկուին վրայ կարկտած էր: Այնտեղ ամէն տեսակ կտոր կար: Նիւթերու եւ գործուածքներու միջեւ խարութիւն չէր գրուած: Այնտեղ կպցուած կային թէ՛ հին գուլպաներու, թէ՛ հին գլխարկներու. կտորուանքներ, Այնտեղ կպցուած կային կոշիկներու երեսներ ալ, իսկ անոնց կարգին՝ գեղեցիկ կտոր մը քաշմիրեան ընտիր շալի: Բաւական էր թել մը քաշել, եւ ահա ցնցոտիներու ամբողջ շարք մը փուլ կուզար, եւ քայքայուելով ու լուծուելով վար կը թափէր: Այդ մարդը, իր վերարկուով, կարծես հասարակութիւնը կը յանդիմանէր: Ան բոլորը մէկանց իր վրայ կը կրէր ինչ որ մարդիկ զատ զատ կը հագնին:

Նշանաւոր էին անոր հողաթափները վ որ կը քաշէին իր մերկ ոտները: Անոնց կացութիւնը շատ չէր տարբերել վերարկուին վիճակէն: Չանաղանութիւնը անոր մէջ էր միայն որ հողաթափներուն կողմուածքին մէջ մտած էր մեծ քանակութեամբ երկաթ, որմէ դժբաղդարար դուրկ էր վերարկուն: Իր կեանքին մէջ այդ թշուառականը, փողոցները կամ ճամբաներուն վրայ, որքան մեխի կտորներ էր գտեր, բոլորը գամեր էր հողաթափներուն տակը: Վերջին ժամանակները, յաջողեցաւ գտնել իշու պայտ մը. ան ալ գամեց առաջիններուն շարքին մէջ. բայց զեռ վախ ունէր թէ արդեօք այդ վրահաւորուած հողաթափները զինքը պիտի տանէին մինչեւ իր կեանքի վերջը: Կարելի էր ամենայն վստահութեամբ երաշխաւորել թէ պիտի տանէին: Որովհետեւ ինչ չափով որ կը մաշէին, անոր հնգապատիկ ու տասնապատիկ անգամ նոր նիւթեր կ'աւելնային անոնց վրայ: Սոսկալի էր անոնց ծանրութիւնը: Բայց ծերունիին սոքերը այն ստիճան սորված էին, որ ոչ շատ դժուարութեամբ զանոնք քարշ կուտար՝ ինչպէս ծանր սաժանական պատիժ մը:

Երբ երկու խաղ-փուշները պատահեցան ի-  
րարու, առաջինը ողջո՞ւնեց հարցնելով,  
— Խաղաղութի՛ւն քեզ Ահմէտ հայրիկ, ի՞նչ  
կայ որ այդպէս կանուխ դուրս ես ելեր:  
— Յո՛ւրտ է, այս առաւօտ շատ ցուրտ է,  
պատասխանեց ծերունին:  
— Կրցա՞ր բան մը գտնել:  
— Ոչին՛չ... ինչպէս աշխարհ պաղեր է ու սա-  
ռոյց դարձեր, այդպէս սառեր է մարդոյ սիրտը:

Երիտասարդ խաղ-փուշը բացառ իր զենջակը  
եւ քանի մը ընդհատալ ստացած ճակնդեղի  
պատառները եղբայրաբար բաժնեց ծերունիին  
հետ, ըսելով:  
— Տա՛ր, այսօր առիկա քեզի կը բուէ. իսկ  
վաղը՝ Աստուած սղոթմած է:

ԲԱՅՅԻ

(Շարունակելի)

### ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

ԱՆԱԹՈՒ ՅԲԱՆՍԻՆ

Ս

Սեւ կամարներուն տակ այդ մեծ ու մռայլ Հիւանդանոցին,  
Որուն հիմունքներն Ազէտքը զըրաւ:  
Եւ որուն կատարը Մահուան զըրօշը կը ծածանի,  
Նեղ մահիճներու գամուած՝ կը հեծեն էակներ անթիւ:  
Ասիկա սո՛ւնն է անիծուածներուն,  
Տունն ուր կը բանաուին զըժբաղդ հողիներն  
Ձոր ձախտագրին մէկ զըմանածոյքը վայրագ ու խօլ  
Ոչընչին խաղաղ ծոցէն վայրկեանի մ՛համար դուրս քաշեց,  
Տունը զըժընդակ ուր կը ծամածոին, կուշան, կ'արիւնին  
Բոլոր երեսներն Ապրելու Յաւին:  
Սա մարդն հոտ պըրկուած, վերաւոր կուրծքով,  
Ուսերը կըքած՝ կարծես կրանիտէ լերան մը ներքեւ,  
Եւ որուն ձևօքերը կը գալարուին  
Դէպ անտես ցընորք մ'ազատ երկընքի,  
Ըստըրկութիւնն է՝ աչքերով յոյսի եւ կատաղութեան:  
Անդին, սա վըտիտ դէմքը ժանգոտած,  
Որ՛ յաւերժական ժանտ մըղձաւանջով մը հալածատանջ՝  
Կը բըզըքաբուի թոյնով մը ներքին,  
Բըռնութիւնն է, պա՛ղ քունքերով, անքուն, անլոյս աչքերով:  
Այդ կինն հրէշաւոր անդամներով, կոշտ միսերով տըձեւ,  
Որ մինաւորիկ՝ անկիւն մը խըրած՝ խուլ կը հեծկըլտայ,  
Դէմքն իր երկու խեղճ ձևօքերուն ներքեւ ցաւաղին ծածկած,  
Տըզիզութիւնն է: Եւ սա ներդաշնակ աղջիկը խըրոխտ,  
Որ՛ տենդոտ ձևօքին մէջ աղետաւոր հայելին սեղմած՝  
Կը փընտաէ անար մողական ջուրին մէջ մութ խորշոմներն  
Ու ճերմակ մազերն. ու բոլոր աւերն  
Որ դարանակալ կը սպասէ թաքուն՝  
Իր մարմնոյն պատիր չըքեղութեան տակ,  
Գեղեցկութիւնն է՝ իր քայքայումին վախովը լըլկուած:  
Հոս Ապուշութիւնն է որ իր պարսպ  
Ու շուարած աչքերը կը լայնցընէ.  
Հոն, Յիւարութիւնն է, որուն քըրքիջն,  
Ահեղ, կը թընդայ, փըլտատակներու մէջ պարող գինով  
Ոգիի մ'ինչպէս երգը մուկիին:  
Ահա՛ Սուգը, ծանր ու լուս, խուսափած  
Ըստուերի մը հետքը փընտըռելով,  
Եւ Նախանձն ահա,  
Թուտոտ թարախով լսրձնած իր բերնովը մեծագալար.

Սէքն՝ իր մերկ սրտիւնն սրբաովն անսահման՝  
 Նուրբ ու ծաղկամորթ, դանդաղ ըսպանող օձերով ուռած :  
 Մերութիւնն ահա, կըմախք ցաւազին ու ծիծաղաչարժ,  
 Եւ Աղբատութիւնն, ուրուական զաղիւր եւ սարսռազղեցիկ :

Աղջամըղջահոծ անկիւններու մէջ կը զիռան ձեւեր  
 Գըստմընատեսիլ,  
 Կանանչ աչքերով Մուրութիւնները,  
 Կարմիր մազերով Ոճիրներն, անդոյն, պազ Անձկութիւններն  
 Ու կապարաթոյր Չանձրոյթը խոնաւ,  
 Եւ հօղերու պէս ոռնացող երկայն Վըհատութիւններն :

Հո՛ն են սոսկալի Ախտերը բոլոր՝  
 Մահուան ափին մէջ յամբօրէն քանդուող ուղորմ Մարմինին,  
 Վայրապ գալարմունքը խենթ Ձիզերուն,  
 Մըսին այրուցքներն ահեղաչարչար,  
 Եւ խաւարներու վրայ խօլարչաւող Մըսքին մըրրիկներն,  
 Ու տառապանքներն իր ունայնին մէջ  
 Անհունութենէն ջախջախուած Հոգւոյն :

Այս բոլորը՝ խա՛ռն ի խուռն՝ կ'ալ'նովի  
 Տանը մէջ զըժնեայ,  
 Ու կը պոռչըտայ այս բոլորն . այլ ձայն մը կը բարձրանայ,  
 Բոլոր ողբերուն ու զոչիւններուն վերեւ ախրական .  
 Եւ ասեղութեան ազաղակն է անո  
 Զօր մահճէ մահիճ բոլոր հիւանդներն իրարու կ'ուզեն :

Ք

Արդ, երբեմն կին մը կուգայ կ'անցնի Հիւանդանոցէն,  
 Գեղեցկութենէն աւելի աղւոր,  
 Դիցուհոյ նըման շըքեղահասակ,  
 Ըստփանքի գոյն մազերով, յոյսի դոյն նայուածքներով,  
 Անսովոր ու քաղցր կին մը, ճերմակ  
 Բօղերով պատած :

Թեթեւադընաց՝ անկողիններուն քովէն կը սահի .  
 Կանգ կ'առնէ երբեմն հիւանդներուն սընարին մօտիկ,  
 Դ անոնց ցաւերուն վըրայ կը հօսէ  
 Խաղաղութիւնն իր ջինջ շըղարչներուն  
 Եւ անուշութիւնն իր աչուրներուն պայծառ երկընքին :  
 Լայնբաց վէրքերուն վըրայ իր ժըպիտը կը ծաւալէ,  
 Տենդոտ ճակատներն իր մեծ մազերովը կը փայլայէ .  
 Իր շունչն օդին մէջ զովութիւն կ'ցանէ  
 Ու կը խընկէ զայն .  
 Եւ հորնտիւններուն վըրայ գըլխահակ՝  
 Օրօր կ'երգէ ան :

Եւ իր լայն օրօրն ըսել կը թըւի  
 Թէ Աղէտքն ըսկիզբն ինչպէս եւ վախճանն է համադոյից :  
 Եւ թէ էակներն, եղբայր՝ համասփիւռ Դըժբաղգութեան մէջ,  
 Պէտք է որ սիրեն զիրար՝ և իրարու վըրայ կըրթընին,  
 Եւ որպէս զի ցաւը մոռնան կեանքին՝  
 Պէտք է գինովնան երազով մը մեծ քան կեանքը համակ :

Իրեն մէջ ամէն բան կը հակասէ այդ տանը մըռայլ  
 Դաժան օրէնքին .  
 Կարծես ան ձեռու աշխարհէ, ուրիշ աշխարհէ մ'կուգայ :

Թերեւս խրդճի խայթն է ձակատագրին ,  
 Որ կ'յածի տրտում ,  
 Այդ աններդաշնակ տան մէջ անիմ : ստ  
 Ձոր այժմ կը զըջայ շինած ըլլալուն :  
 Ան Այցելուհին է խորհրդաւոր և'անըմբռնի ,  
 Ան Հիւանդապահն է հրեշտակային եւ մայրազօրով ,  
 Որուն անցքը լոյս կը ցըրցըքնէ մերթ  
 Հիւանդանոցին անզըւարթ ու փուտ աղջամուղջին մէջ .  
 Եւ իրենց տըխեղձ լեզուով՝ հիւանդներն  
 Անոք Դ՛ԹՈՒԹԻՒՆ անուան են տըւած :

ՏԵՐՎԻՇ

**ԱՐՈՒԵՍՏԻ ԷԶԵՐ**  
**ՅՈՒՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ**

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ Ա.ԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ  
 Բ

Պարարուեստին քով Յունաստանի մէջ կար ուրիշ հաստատութիւն մը՝ ա՛յլ աւելի ազգային , եւ որ դաստիարակութեան երկրորդ մասը կը կազմէր , — մարմնամարզութիւնը : Արքէն Հոմերոսի մէջ դա՛ն կը գտնենք . հերոսները կ'ըմբշամարտին , սկուսեղ կ'արձակեն , հետի-



Ա.Թ.Ն.Ա.Ս

վեց ազգային ուղին : Կորովի ու կարծր մարդիկ էին , բաւական նման միջին-դարու Ջուկեցերացիներուն , շատ նուազ փայլուն ու շատ նուազ վառվուռն քան Յոնիացիները , աւանդութեան


ո՛րն ու կատարով կ'արշաւեն . այն որ մարմնական հրահանգներուն մէջ ճարպիկ չէ , «իս-նու. թայն» կը համարուի , վարնոց մարդ մը , «որ , բեռնաբարձ նաւու մը վրայ , իր վաճառքներէն ու վաստակէն ուրիշ բան չի մտածեր» : Բայց հաստատութիւնը դեռ կանոնաւոր չէ , ոչ ալ մաքուր ու կատարեալ : Խաղերն իրենց յատուկ աեղ եւ որոշ թուական չունին : Զանոնք կը կատարեն զիպուածով , հերոսի մը մահուան առթիւ , կամ օտարական մը պատուասիրելու համար : Արագաշարժութիւնն եւ ուժեղութիւնը աճեցնելու նպատակը շատ մը հրահանգներ դեռ անձանօթ են այնտեղ . ի փոխարէն , անոր մէջ կը մտցնեն զինավարժութիւնը , մինչեւ արիւնահեղութեան հասնող մեծամարտը , ազեղ-նաճգութիւնը , ախարձակութիւնը : Յաջորդ շրջանին մէջ է միայն որ , պարարուեստին ու քնարական բանաստեղծութեան հետ , մարմնամարզութիւնն ալ կը դարձանայ , հաստատուն դրոշմ մը կը ստանայ , եւ կ'առնէ այն ձեւն ու կարեւորութիւնը որ ծանօթ են մեզի : — Նշանը տըւին Գորիացիները , նոր ժողովուրդ , զուտ յունական ցեղէ , որ իր լեռներէն դուրս ելլելով Պեղոպոնէսին մէջ տարածուեցաւ եւ ինչպէս Փրանկներն ի Գալլիա , իր ուղմագիտութիւնը բերաւ մտցուց հոն , իր ազգեցութիւնը արիական դարձուց եւ իր անեղձ հոյզովը վերանորո-

սէր, յարգանքի զգացում, կարգապահութեան բնազդ ու վեհ, առնական հանդարտ ողի մը ունեցող, եւ որոնք իրենց ոգւոյն կենքը զբած էին իրենց կրօնքին խիստ ծանրութեանն ինչպէս եւ իրենց աստուածներուն գեցաղնական ու բարոյալից նկարագրին մէջ : Այդ ժողովրդին գլխաւոր հատուածը, որ կը բաղկանայ Սպարապետներէն, Լակոնիա հաստատուեցաւ, այդ երկրին հին բնակիչներուն մէջը զորոնք շահագործեց կամ իրեն գերի դարձուց, հպարտ ու խստբարոյ տէրերու ինք հազար ընտանիք, անպարսպ քաղաքի մը մէջ, հարիւր քսանեւեհինգ հազար վարձակալներ եւ քսանեւեհինգ հազար ստրուկներ իրենց մըշտ հնազանգ պահելու ստիպուած, իրենցմէ տասն անգամ աւելի բազմաթիւ թշնամիներու մէջտեղը մշտապէս բանակաւանդ հաստատած զօրաբաժնի մը ձեւն ունէին :

Այս գլխաւոր գծէն կախեալ են բոլոր միւսները : Տակաւ առ տակաւ վերջնական ձեւ մը առաւ այն բեժիմը զոր կացութիւնը կը հարկադրէր, եւ ոլիմպիական խաղերու վերահաստատման թուականին մօտերը՝ ա՛լ կատարեալ էր ան : — Հանրային օգտի զաղտփարին առջեւ, անհատին շահերն ու քմահաճոյքները կը ջնջուէին : Իրենց կարգաւորութիւնն այն է զոր կ'ունենայ մշտածեւ վտանգի մը սպառնալիքին տակ դանուող զօրագունց մը : Արգիլուած է Սպարապետներն՝ առեւտուր ընել, ճարտարարուեստով մը զբաղիլ, իր հողաբաժինը օտարին ձեռքը յանձնել, անոր եկամուտը բազմապատկել, ուրիշ բանի պէտք չէ մտածել բայց եթէ զինուոր ըլլալու : Եթէ ճամբորդէ՝ կրնայ իր դրացիին ձին, զերին եւ պաշարը գործածել : Ընկերներու միջեւ, ծառայութիւն մը ուղելը իրաւունք մըն է, եւ ստացուածքը բացարձակապէս անհատական չէ : Նորածին երախան ծերունիներու խորհուրդի մը առջեւ կը բերեն եւ կը սպաննեն զայն եթէ շատ տկար կամ տձեւ է : Բանակին մէջ միայն քաջատուջ մարդիկը կ'ընդունին, եւ այդանոց ամենքն ալ զինուորագրեալ են՝ օրօրոցն սկսեալ : Ծերունի մը որ չի կրնար զաւակ ունենալ, ինքն իսկ երիտասարդ մը կ'ընտրէ զոր իր տունը կը տանի : Երբ ձեռք առնէ ամէն տուն պէտք է նոր զինուորներ հասցնէ : Չափահասները, իրարու հետ աւելի բարեկամ ըլլալու համար, կ'նիկնին իրարու փոխ կուտան, բանակեալի մը մէջ, ընտանեկան խնդիրներու մասին շատ բժախնդիր չեն, եւ յաճախ շատ մը բաներ հասարակաց ինչքը կը համարուին : Մէկտեղ կը ճաշեն, խումբ խումբ՝ զօրասեղան մըն է, որ իր մասնաւոր կանոններն ունի եւ ուր աւմէն մէկն իր բաժինը կը հայթայթէ դրամով կամ նիւթեղէնով : Ամէն բանէ առաջ՝ զինուորական հրահանգը՝ ամօթ է տան մէջ յամենալ : զօրանոցի կեանքը տունի կեանքէն գերակշիռ է : Նոր փեսան իր կինը ծածուկ կ'երթայ տեսնելու : Եւ առաջուան պէս՝ ամբողջ օրը կ'անցընէ զօրախումբին վարժոցին մէջ, զինուորական գումարաւայրը : Այդ պատճառով տղաքը զօրագնդի զաւակներ են, ամենքը միասին մեծցած, եւ տասներեքնոց օտարեկանէն՝ դասակներու բաժնուած : Իրենց հանդէպ, ամէն չափահաս մարդ երէց մը ազայ մըն է, եւ կրնայ զիրենք պատժել առանց որ հայրը իրաւունք ունենայ բողոքելու : Բողոտն, վերարկու մը միայն հագած, որ ամառ ձմեռ չի փոխուիր, փողոցներէն կը քալին, լուռ, աչքերնին վայրահակ, ինչպէս զիտատի զինուորագրեալներ՝ զէնքը ձեռքերնին : Հագուստին համազգեստ մըն է, կեցուածքն ու քալուածքը կանոնաւորուած է : Եղէգի շեղջի մը վրայ կը պառկին գիշերը, ամէն օր Եւրոտասի պող ջուրերուն մէջ կը լողանան, քիչ ու շուտ կ'ուտեն, բանակեալին մէջ զիրենք աւելի հանդիստ կը զգան քան քաղաքը : Ինչու որ ասպազայ զինուոր մը պէտք է շարքաշութեան վարժուի : Հարիւր հոգիով խումբերու բաժնուած են, որոնց իւրաքանչիւրը պետ մը ունի, եւ ոտքով, ձեռքով կը կուտին իրարու հետ, պատերազմի նախաւարժութիւն մըն է : Եթէ ուղեն բան մը աւելցնել իրենց վտիտ սովորականին, զայն տուններէն կամ ագարակներէն կը գողնան, զինուոր մը պէտք է որ գողութեամբ ազրիլ գիտնայ : Երբեմն երբեմն զանոնք ճամբաներուն վրայ դարանակալ կը ձգեն, եւ գիշերը՝ ուշ մնացած ստրուկները կը սպաննեն : օգտակար է որ արիւն տեսնեն եւ ձեռքերնին՝ առաջուց վարժուի :

Գալով արուեստներուն, բանակի մը պատշաճոցներն է որ ունին : Իրենց հետ բերած են երաժշտութեան մասնաւոր տիպ մը, գործիական եղանակը, միակը թերեւս որուն ծաղումը զուտ յունական ըլլայ : Անոր նկարագրերը լուրջ է, առնական, վեհ, շատ պարզ եւ նոյն իսկ դաժան շատ յարմար՝ համբերութիւն եւ արիւթիւն ներշնչելու : Անհատին քմահաճոյքին չէ մատնուած : օրէնքը կ'արգիլէ անոր մէջ օտար ձի պէսպիսութիւնները, մեղկութիւնները, պաճուճանքները մտցնեն, բարոյական եւ քաղաքական հաստատութիւն մըն է : Ինչպէս թմբուկ-

ներն ու փողերու հնչիւնը մեր զօրագունքերուն մէջ, ան կ'առաջնորդէ գնացքներուն եւ զօրահանգէսներուն: Ժառանգական սրնպահարներ ունին, ինչպէս են «բիպրոջ» նուափողները Սկովտիոյ «քլան»ներուն մէջ: Նոյն խոյ պարը զինավարժութիւն կամ տողանցութիւն մըն է:



Պայքար Պոլլուքսի եւ Լինկէտի  
Պղնձէ քանդակ (Հուաքածու Քարաքանոսի)

Հինդ տարեկանէն սկսեալ մանչերուն կը սորվեցնեն՝ պիւսական խաղին մէջ, — մնջկատակ մը զինեալ մարտիկներու որոնք յարձակման ու պաշտպանման բոլոր շարժումները կը ձեւացնեն, — այն բոլոր կեցուածքներն ու բոլոր շարժումները զոր մարդ կ'ունենայ՝ զարնելու, հարուածէ մը խուսափելու, ընկրկելու, ցատքելու, կուսնալու, աղեղ քաշելու, տէղ արձակելու համար:

Կայ ուրիշ պար մը «անապալ» անուն , որուն մէջ պատանիներն ըմբշամարտութիւնն ու համամարտը կը ձեւացնեն : Ուրիշներ ալ կան երիտասարդներուն համար , կան ուրիշներ՝ աղջիկներուն համար , բունն ցայտքերով , «եղնիկի ոստիւն»ներով , գահավէժ վաղբեր , որոնց մէջ՝ «մարուկներու նման , եւ մտքերնին հողմածուփ , փոշին օդը կը հանին» (Արխատփան) , Բայց ամենէն զլիաւորները , «գիմնոպետիաներն» են , մեծ զօրահանդէսներ ուր ամբողջ ազգը՝ դաս դաս բամուռած՝ դեր կը կատարէ : Մերունիներուն դասը կ'երգէր . «Մենք ատենով ուժեղ եւ րիտասարդներ ենք եղած» . չափահասներուն դասը կը պատասխանէր . «Մենք հի՛ մա երիտասարդ ենք . եկուր չափուէ՛ եթէ փափաք ունիս» . տղոց դասը կ'աւելցնէր . «Ու մենք օր մը ալ աւելի քաջ պիտի ըլլանք» : Ամենքն ալ՝ տղայ հասակնուն՝ սորված ու կրկնած էին քայլատիտը , շրջաբերութիւնները , չափը , գործողութիւնը . ոչ մէկ տեղ , խմբերգական բանաստեղծութիւնը այնքան ընդարձակ ու զեղակարգ ամբողջութիւններ չէր ձեւացներ : Եթէ այսօր զայդ շատ հեռուէն յիշեցնող տեսարան մը ուղեկնք փնտռել , Սէն-Սիրն իր զօրահանդէսներով ու հրահանգներով , կամ լաւ եւս՝ մարմնամարզութեան զինուորական դպրոցը , ուր զինուորները խմբովին երգել կը սորվին , թերեւս մեղի պիտի ընծայէր զայն :

Զարմանալի չէ ուրիմն՝ եթէ այսպիսի ոստան մը կազմակերպած եւ կատարելագործած է մարմնամարզութիւնը : Սպարտացի մը պարտաւոր էր տասը «խլոթ» (սորուկ) արժել , ապա թէ ոչ մահուան կը դատապարտուէր : Ըստ որում ստուարագէն էր եւ հեռեւակ , եւ մարմին մարմնի կը կռուէր՝ մէկ կարգի վրայ եւ տոկուն , կատարեալ դաստիարակութիւնը այն էր որ աւմենէն արագաշարժ եւ ամենէն հուժկու սուսերամարտիկը կը կազմէր : Ատոր հասնելու համար՝ տղուն ծնելէն առաջ խնամքները կը սկսէին , եւ Յոյներուն ճիշդ հակառակը , ոչ միայն էրկի մարդը կը պատրաստէին , այլ եւ կիներ , որպէս զի մանուկը , երկու արիւններուն ժառանգորդ , իր մօրմէն ալ՝ ինչպէս իր հօրմէն՝ ստանար քաջութիւնն եւ ուժը : Աղջիկները զիմնազիտներ ունին եւ վարժութիւններ կը կատարեն , մանչերուն պէս , մերկ կամ կարճ շապիկ մը հագած , վազելու , ցատքելու , ակուտեղ եւ նիզակ արձակելու . իրենց պարախումբերն ունին . գիմնոպետիաներուն իրենք ալ կը մասնակցին՝ այրերուն հետ : Արխատփան սքանչացմամբ կը յիշէ , — աթենական ծաղրանքի երանգով մը , — անոնց թարմ մորթի գոյնը , բարգաւաճ առողջութիւնը , քիչ մը կոշտ ուժեղութիւնը : Ասիկց զատ , օրէնքը ամուսնութեան տարիքը կ'որոշէ , եւ զաւակաբերութեան համար ամենէն նպաստաւոր վայրկեանն ու պարագաները կ'ընտրէ : Բնական է որ այդպիսի ծնողքներ զեղեցիկ եւ զօրեղ զաւակներ պիտի ունենան . սասպստաններու դրութիւնն է , եւ անոր կը հետեւին ամբողջապէս , քանի որ չյաջողած երախաները կը ջնջեն : — Անգամ մը որ մանուկը քալել սկսի , ոչ միայն զայն չարքաջութեան կը վարժեցնեն եւ պայքարին կը պատրաստեն , այլ եւ մեթոտով կը ճազկացնեն եւ կ'ուժեղցնեն զայն : Քսենոփոն կ'ըսէ թէ Յոյներուն մէջէն անոնք են միայն որ հաւասարապէս կը կրթեն մարմնոյն բոլոր մասերը , վիզը , բազուկները , ուսերը , սրունքները , եւ ոչ միայն պատանութեան տեղն , այլ ամբողջ կեանքին մէջ եւ ամէն օր . բանակետոյն մէջ՝ օրը երկու անգամ : Այս մարմնակրթութեան արդիւնքն ընդհուպ զգալի եղաւ : «Սպարտացիք , կ'ըսէ Քսենոփոն , Յոյներուն մէջէն ամենէն առողջներն են , եւ անոնց մէջ է որ կը գտնուին Յունաստանի տմենէն զեղեցիկ մարդիկն ու ամենէն զեղեցիկ կիները» : Անոնք նուաճեցին Մեծենացիները , որ հոմերական շրջանի անկարգութեամբ ու անպարտութեամբ կը կռուէին . Յունաստանի կարգաւորիչներն ու պետերն եղան . եւ Մարական պատերազմներու ատեն՝ իրենց ազդեցութիւնը այնքան խորահաստատ էր , որ ոչ միայն ցամաքի այլ եւ ծովու վրայ , ուր իրենք գրեթէ ոչ մէկ նաւ չունէին , բոլոր Յոյները , եւ նոյն իսկ Աթենացիք , առանց տրանջալու՝ անոնցմէ զօրապետներ կ'ընդունէին :

Երբ ժողովուրդ մը առաջին կը հանդիսանայ քաղաքակախութեան եւ պատերազմի մէջ , իր դրացիները , մօտէն կամ հեռուէն՝ կը սկսին որդեգրել այն հաստատութիւններն որ այդ առաջնութիւնն անոնց առած է : Քիչ քիչ Յոյները Սպարտացիներէն փոխ կ'առնեն , եւ ընդհանրապէս Դորիացիներէն , անոնց բարձրուն , բժժիմին ու արուեստներուն կարեւոր գծերը , դորիական դաշնարուեստը , խմբերգական բարձր բանաստեղծութիւնը , շատ մը պարիճեւեր , ճարտարապետութիւնը , հազուստը՝ աւելի պարզ եւ աւելի առնական , զինուորական կարգաւորու-

թիւնը՝ աւելի ամրապինդ , ըմբիշին ամբողջական մերկութիւնը , մարմնամարզութիւնը սխառմի մը կարգը բարձրացած : Չինուորական արուեստի , երաժշտութեան եւ մարզարանի շատ մը բացատրութիւնները գործական ծագում ունին կամ դորիական բարբառին կը պատկանին : Արդէն Թ. դարուն՝ մարմնամարզութեան ստացած նոր կարեւորութիւնը յայտնուած էր ընդմիջուած մրցակազմերուն վերահաստատմամբը , եւ բազմաթիւ իրողութիւններ ցոյց կուտան թէ տարուէ տարի անոնք աւելի ժողովրդական կը դառնան : 776ին , ոչխրական խազերը իբր թուական եւ մեկնակէտ կը սկսէին ծառայել՝ տարիներու շղթան կապելու համար : Յաջորդ երկու դարերու միջոցին , Պիւթոյի , Իսթմոսի եւ Նեմէի խազերը կը հիմնուին : Անոնք նախ ուրիշ բան չէին բաց միայն վաղքը պարզ ընթացարանին մէջ . հետզհետէ անոր վրայ աւելցուցին կրկնակ ընթացարանի մէջ վաղքը , ըմբշամարտութիւնը , կոխամարտը , կռուարշաւը , համամարտը , ճիարշաւը . յետոյ՝ տղոց համար՝ վաղքը , ըմբշամարտութիւնը , համամարտը , կոխամարտը , ուրիշ խաղեր ալ , ընդամենը քսանուչորս հրահանգ : Լակեզեմոնական սովորութիւնները հոմերական աւանդութիւններէն գերադաս կը հանդիսանան այժմ . յաղթականը այլեւ թանկագին առարկայ մը չէ որ կը ստանայ , այլ պարզ պսակ մը տերեւահիւս . այլեւս նախկին դասին չի պահեր . տասնուչորրորդ Ոլիմպիատոնին , բոլորովին մերկ կ'երեւայ : Յաղթականներուն անուներէն կը տեսնուի թէ Յունտատանի ամէն կողմէն կուգան անոնք , ամբողջ Մեծ-Յունաստանէն , կղզիներէն եւ ամենէն հեռաւոր զաղթականութիւններէն : Այլ եւս չկայ ոստան մը որ գիմնազիտն մը չունենայ . ա՛լ աւելի մին է այն նշաններէն որոնցմով յունական քաղաք մը կը ճանչցուի : Աթէնքի մէջ անոնց առաջինը 700ի մօտերը հիմնուած է : Սողոնի օրով՝ ան արդէն երեք մեծ գիմնազիտն ունէր՝ որոնք հանրային էին , եւ բազմաթիւ փոքրեր : Տասնըվեցէն տասնեօթը տարեկան պատանին հոն կ'անցընէր իր օրերը , ինչպէս ցորեկօթիկներու լիկէննի մը մէջ՝ որ կարգադրուած ըլլար ոչ թէ մտքին զարգացման այլ մարմնոյն կատարելագործման համար : Կը թուի նոյն խակ թէ այդ միջոցին քերականութեան եւ երաժշտութեան ուսումը կը դադրէր՝ թոյլ տալու համար որ երիտասարդը աւելի մասնաւոր ու աւելի բարձր դասի մը մէջ մտնէր : Այդ գիմնազիտնը մեծ քառակուսի մըն



ՀԵՐՍՎԼԵՍ (Փարնեզեան Թանգարան)

էր , անդաստակներով եւ սօսիներու ճեմուղիներով , սովորաբար տղբիւրի մը կամ գետակի մը մօտ , շատ մը աստուածներու եւ պսակաւոր ըմբիշներու արձաններով զարդարուած . ան իր պեան ունէր , իր մասնաւոր դասաչափներն ու կրկնիչները , իր տօնն ի պատիւ Հերմէսի , երկու հրահանգի մէջտեղը , աշակերտները կը խաղային . քաղքեկներն սղատմուած ունէին այնտեղ , ընթացավայրին շուրջը բազմաթիւ նստարաններ կային . կուգային

հոն՝ ման գալու, երիտասարդները դիտելու, խօսակցութեան տեղ մըն էր. հոն էր որ ետքէն փիլիսոփայութիւնը ծնաւ: Այդ դպրոցին մէջ, որ մրցումի մը կը յանգի, իրար գերազանցելու տենչը ծայրայեղութեանց ծնունդ կուտայ՝ եւ հրաշալիքներ կ'արտագրէ. կը տեսնուին մարդիկ որ ամբողջ կեանքերնին հրահանգներ կը կատարեն: Սաղերու կարդադրութիւնը զիրենք կը ստիպէ՝ կրկէսն իջած ատեննին երդուըննալու թէ գոնէ տասը ամիս անընդհատաբար եւ ամենամեծ խնամքով վարժութիւններ են կատարած. բայց աւելին կ'ընեն. իրենց ինքնամարզանքն ամբողջ տարիներ կը տեւէ եւ կը շարունակուի մինչեւ հասուն տարիքը. բեժիմի մը կը հետեւին. շատ կ'ուտեն եւ որոշ ժամերու. իրենց մկանունքները կը կարծրացնեն քերսցի եւ պաղ ջուրի միջոցով, հաճոյքներէ եւ գրգռումներէ ետ կը կենան. ինքզինքնին մաքրակենցաղ կեանքի մը կը դատապարտեն. իրենցմէ շատերը առասպելական հերոսներուն: Ախարաբ-ժութիւնները վերանորոգեցին: Միւրն, կ'ըսեն, ցուլ մը կը կրէր իր ուսերուն վրայ, եւ ետեւէն բռնելով լծուած կառք մը՝ դայն իր վաղքին մէջ կը կեցնէր: Փախլլոս կրտսնացւոյն արձանին ներքեւ դրոշմուած վերտառութիւն մը կ'ըսէր թէ ան մէկ ոստումով յիսունեւհինգ ոտք լայնութեամբ տարածութիւն մը կը կտրէր եւ թէ ութը լիպրա ծանրութեամբ սկուտեղը ինսունեւհինգ ոտք հեռուն կ'արձակէր: Պինդարոսի երգած ըմբիշներուն մէջ, կան որ հսկաներ են

Նկատեցէք որ յունական քաղաքակրթութեան մէջ, այդ սքանչելի մարմինները հաղուազիւտ բաներ, պերճանքի առարկաներ, եւ, ինչպէս այսօր, ցորենի դաշտի մը մէջ անօգուտ խաշխաշներ չեն. պէտք է, ընդհակառակն զանոնք բազմաթիւ լայն հունձքի մը մէջ աւելի բարձր հասկերու: Պետութիւնը պէտք ունի անոնց. հանրային բարքերը կը պահանջեն զանոնք: Հերակլէսները զոր յիշեցի, միայն մրցահանդէսներուն չէ որ կը ծառային: Միւրն իր քաղաքակիցները պատերազմի կ'առաջնորդէր, եւ Փախլլոս պետը եղաւ կրտսնացւոյ որոնք Յոյներուն օգնութեան եկան Մարաց դէմ: Զօրապետը, այն ատեն, բլուրի մը վրայ կեցող եւ ձեռքը քարոտէս մը ու հեռագիրտակ մը բռնած հաշուադէտ մը չէր. ակզը ձեռքը, իր գունդին գլուխն անցած, կուրծք կուրծքի կը կոռէր, զինուորի պէս: Միլլիատէս, Արիստիտէս, Պերիկլէս եւ նոյն իսկ, շատ աւելի ետքը, Ագեսիլաս, Պելոպիդաս, Պիւտոս, կը զործածէին ոչ միայն իրենց խելքը, այլ եւ իրենց բազուկները, զարնելու կամ թշնամիին հարուածը վրիպեցընելու համար, յարձակելու՝ հետիոտն կամ ձիու վրայ, կոիւին ամենէն տաք տեղը. Եպաւ մինոնպաս, քաղաքագէտ մը, փիլիսոփայ մը, մահացու կերպով վիրաւորուած, պարզ նկատեալ զօրի մը պէս կը միխթարուի՝ տեսնելով որ իր վահանն ազատէր են: Հնդամարտի մէջ յաղթող մը, Արատոս, Յունաստանի վերջին զօրագլուխը եղաւ եւ իր մագլցումներուն ու յանկարծական յարձակումներուն մէջ մեծ արագաշարժութիւն եւ ոյժ ցոյց տուաւ: Աղեքսանդր հուսարի մը պէս կը յարձակէր՝ կրանիքի պատերազմին մէջ, եւ Ոկսիդրոսներու քաղաքէն ներս ամենէն առաջ ցատքեց՝ ձիախաղի մը նման: Պատերազմելու այսքան մարմնական ու այսքան անձնական եղանակով մը, ամենէն բարձրաստիճան քաղքեհիներն իսկ, մինչեւ անգամ իշխանները, պարտաւոր էին լաւ ըմբիշներ ըլլալու: — Վտանդին պահանջներուն վրայ աւելցուցէք հանդէսներուն հրաւէրը. տօնախմբութիւնները, այնքան որքան պատերազմները, մարզուած մարմիններ կը պահանջէին. պարախումբներուն մէջ այն ատեն միայն կարող էին լատեղ մը բռնել երբ զինազինէն անցած էին: Պատմեցի թէ ինչպէս Սոփոկլէս բանաստեղծը մերկ պարեց պէսներ՝ Սալամինայի պատերազմէն յետոյ. Դ. դարուն վերջերը, միւսնոյն բարքերը դեռ կը տեւէին: Աղեքսանդր, Տրոլադաս հասնելով, հագուստները հանեց, Աքիլլէսին ի պատիւ եւ հերոսին գերեզմանին վրայ կանգնող սիւնին շուրջն իր ընկերներուն հետ վազքի մրցում մը կատարեց: Քիչ մը անդին, Փասելիսի մէջ, հրապարակին վրայ թէնդիկտ փիլիսոփային արձանը տեսնելով, ճաչէն յետոյ՝ եկաւ արձանին շուրջը պարեց եւ ծաղիկներ նետեց անոր: — Այսօրինակ ճաչակներու եւ պէտքերու զոհացում տալու համար, գիմնազիոնը միակ դպրոցն էր. մեր վերջին դարերու այն ակադեմիաներուն կը նմանէր, ուր երիտասարդ զինուորները կ'երթային զինավարժութիւն, պար եւ ձիավարժութիւն սորվելու: Ազատ քաղքեհիները նախնեաց ազնուականներն էին հետեւաբար չկար ազատ քաղքեհի մը որ զինազինոն յաճախած չըլլար: այդ պայմանով միայն բարեկիրթ մարդ կը համարուէին, ապա թէ ոչ արհեստաւորներու եւ ստորին դասու մարդոց կարգը կ'իյնային: Տիմոկրէոն բանաստեղծը, Պլատոն, Քրիսիպոս, նախ

ըմբիչ էին եղած . Պիւթադորասի համար կ'ըսէին թէ կոփամարտութեան մրցանակ ստացած էր .  
 Եւրիպիդէս իբրեւ ըմբիչ պսակ ընդունեցաւ ելեւսեան խաղերուն մէջ : Կլիսթենէս , Սիկիոնի  
 բռնաւորը , իր սանը մէջ ընդունելով իր աղջկան թեկնածուները , մարմնամարդութեան դաշտ  
 մը հրաւիրեց զանոնք , «որպէսզի , կ'ըսէ Հերոդոտոս , կարենար փորձով տեսնել անոնց քա-



ԳԼՈՒԽ ԱՆՏԻՆՍԻՈՍԻ  
 (Հաւաքածոյ Սուզէ)

ջակազմութիւնն ու  
 կրթութիւնը» : Ար-  
 դարեւ , մարմինը  
 մինչեւ վերջը կը պա-  
 հէր մարդական կամ  
 ստրկական հետքերը .  
 առաջին ակնարկով  
 այդ բանը կը զգա-  
 ցուէր անոր վայել-  
 շութենէն , քալուած-  
 քէն , շարժուած քնե-  
 րէն , զգեստին մէջ  
 փաթթուելու ձևէն ,  
 ինչպէս ստինոք ա-  
 կայեմիաներու շնոր-  
 հիւ աշխուժցած ու  
 ազնուացած տունիկը  
 կը զանազանուէր կո-  
 պիտ շինականէն եւ  
 ճոզած բանաւորէն :

Նոյն իսկ ան-  
 շարժ ու մերկ , մար-  
 դանք ըրած ըլլալը  
 կը յայտնէր՝ մարմ-  
 նոյն զեղեցկու-  
 թեամբը : — Մորթը ,  
 արեւէն , իւզէն , փո-  
 շիէն , քերոցէն եւ  
 պող ջուրէն թխա-  
 ցած եւ ամբացած ,  
 հանուածի ձեւ չու-  
 նէր . վարժ էր բաց  
 օդին . կը զգացուէր  
 որ իր տարրին մէջ

էր այդպէս . անշուշտ չէր սարսուար , չէր կապուտնար , փուշ փուշ չէր ըլլար , առողջ հիւսուած  
 մըն էր , աղւոր գոյնով մը որ ազատ ու արու կեանքը կը յայտնէր : Ադեսիլաս , իր մարդիկը  
 խրախուսելու համար , օր մը հանուեցնել տուաւ զերի բունուած Պարսիկները . այդ սպիտակ ու  
 կակուղ միսերը տեսնելով , Յոյները սկսան ինդալ եւ յառաջ խաղացին , իրենց թշնամիքնե-  
 րուն համար արհամարհանքով լեցուած : — Մկանունքները ըտրորն ալ ուժովցած եւ ճկունցած  
 էին . անոնցմէ ոչ մէկը զանց առած չէին . մարմնոյն զանազան մասերն իրարու հետ կը հաւա-  
 սարակչուէին . վերջարագուկը , այժմ այնքան նիհար , ցցուած ու սակաւամիտ անբակնե-  
 րով , լեցուն էին եւ ազդերուուն ու բարձքերուն համեմատական զուգեակ մը կը կազմէին . վար-  
 պեաները , ճշմարիտ արուեստագէտներու պէս , մարմինները կը մարզէին ոչ միայն ուժեղու-  
 թիւն , զիմացկունութիւն եւ արագութիւն տալու համար , այլ եւ համաձեւութիւն եւ վայելչու-  
 թիւն «Մահամերձ Գալլիացին» , որ Պերգամի պարոյցին գործերէն մէկն է , ցոյց կուտայ , եթէ զայն

բաղդատենք ըմբիշի արձաններու հետ, անջրպետը որ կը բաժնէ անմարդ մարմին մը մշակուած մարմինէ մը, մէկ կողմէ բաշի մը պէս կարծր փունջերով ցանուցիր մազեր, գեղջուկի ոտքեր եւ ձեռքեր, թանձր մորթ մ. չճապկացած մկանուէնքներ, սրածայր արմուկներ, ուռած երակներ, անկիւնաւոր շրջապծեր, բիրտ ելեւէջներ, ուրիշ ոչինչ բայց եթէ հուժկու վայրենիին անասնական մարմինը: միւս կողմէ բոլոր ձեւերն ազնուացած, զարշապարձ առաջ լինիւած ու թոյլ, այժմ յստակ ձուածուի մը մէջ պարագծուած, ոտքը՝ առաջ շատ լայնցած եւ իր կապկային խնամութիւնը մատնելով, այժմ աղեղնածիր եւ առածգական՝ դատումին համար, խոտուցը, յօղաւորումները, ամբողջ սակրաշէնքը, առաջ ցայտուցիկ, այժմ կէս-աւրուած եւ պարզապէս նշանակուած. ուսերուն գիծը, առաջ հորիզոնական ու կարծր, այժմ կորացած ու մեղմացած. ամենուրեք ներգաշնակութիւնը մասերուն՝ որ իրար կը շարունակեն եւ իրարու մէջ կը հեղուն երիտասարդութիւնն ու թարմութիւնը հասանուտ կեանքի մը, այնքան բնական եւ այնքան պարզ որքան ծառի մը կամ ծաղկի մը կեանքը: Քսան հատուած կարելի է գտնել Պլատոնի «Քարմիդէս»ին. «Հակառակորդներ»ուն. «Մենեքմ»ին մէջ, որոնք այդ կեցուածքներէն միոյն թոռուցիկ տպաւորութիւնը կը սեւեռեն. այդպէս կրթուած երիտասարդ մը իր անդամները լաւ ու բնականօրէն կը գործածէ. գիտէ ծոխլ, կանգնիլ, մէկ ուսը սխուի մը կրթնցնել, եւ այդ բոլոր կեցուածքներուն մէջ արձանի մը չափ գեղեցիկ ըլլալ. ինչպէս որ, Յեղափոխութենէն առաջ, ազնուականները, բարեւելու, ծխախոտ առնելու կամ մտիկ ընելու համար այն գիւրաշարժութիւնն ու սէգ շնորհն ունէին զոր այդ ժամանակուան փորագրութիւններուն ու կենդանագրերուն մէջ կը գտնենք: Բայց ինչ որ կը տեսնուէր Յոյնին ձեւերուն, մէսթին ու զիրքին մէջ, արքունիքի մարդը չէր, մարզարանի մարդն էր, Պլատոն կը նկարագրէր զայն, այնպէս ինչպէս հատընտիր ցեղի մը մէջ ժառանգական մարմնամարզութիւնը զայն կազմած էր:

«Բնական է, Քարմիդ, որ դուն յաղթես բոլոր միւսներուն, որովհետեւ ոչ ոք այստեղ, կարծես, զիւրաւ ցոյց պիտի տար Աթէնքի մէջ, քեզի ծնունդ տուող երկու ընտանիքէն զատ՝ երկու տուն, որոնց միացումը կարենայ արտագրել քեզի պէս գեղեցիկ եւ բարեկազմ անձ մը: Արդարեւ, ձեր հայրական գերդաստանը, Դրոպիտի որդւոյն Կրիտիասինը, Անակրէոնէն, Սոդոնէն եւ ուրիշ շատ մը բանաստեղծներէ՝ գովաբանուած է, իբրեւ մեծապէս օժտուած՝ գեղեցիկութեամբ, առաքինութեամբ եւ այն բոլոր միւս բարիքներով որոնց մէջ կը գնենք երջանկութիւնը: Եւ նմանապէս՝ մօրդ գերդաստանը: Որովհետեւ ոչ ոք, ըսուածին նայելով, աւելի գեղեցիկ եւ աւելի մեծ չէ երեւցած քան քու Պիրիլամպոս մօրեղբայրդ, ամեն անգամ որ զայն իբրեւ գիտական կը զրկէին մեծ թաղաւորին կամ ցամաքերկրին վրայ գտնուող ուրիշ անձի մը մօտ, եւ այդ ազատունի մը բնաւ վար չի մնար առաջինէն: Այսպիսի ծնողքներէ ծնած ըլլալով, բնական է որ ամէն բունի մէջ առաջին ըլլաս: Եւ նախ բոլոր տեսանելի մասերովդ, ամբողջ արտաքին տեսքովդ, սիրելի՛ զաւակ Կլաւքոսի, ինձի կը թուի թէ՛ դուն քու նախահայրերէդ եւ ոչ մէկուն ամօթ չես բերեր:»

«Արդարեւ, կ'աւելցնէ ուրիշ տեղ մը Սոկրատ, ինձի հիանալի կ'երեւար ան՝ հաստկովն ու գեղեցիկութեամբը, մեզի՝ հասուն մարդոց» այդպէս երեսալը շատ զարմանալի չէ. բայց նկատեցի որ տղոց մէջ ալ, ոչ մէկը ուրիշ տեղ չէր նայեր, ոչ խիկ ամենէն փոքրիկները... եւ ամենքն ալ զմայլած անոր կը նայէին՝ ինչպէս աստուածի մը արձանին: Եւ Քերեփոն, գովեստը կրկնապատկելով. «Անոր գէմքը շատ գեղեցիկ է, այնպէս չէ՞, Սոկրատ: Արդ, եթէ հանուի, մարմինը այնքան գեղեցիկ է որ ա՛լ գէմքը ոչինչ պիտի թուի:»

Այս պզտիկ տեսարանին մէջ, որ մեզ իր թուականէն շատ աւելի հին ատեններու մէջ — մերկ մարմնոյ մինչեւ ամենէն աղւոր օրերը — կը փոխադրէ, ամէն բան նշանակալից է եւ թանկագին: Այնտեղ կը տեսնուի արիւնին աւանդութիւնը, դաստիարակութեան ազդեցութիւնը, գեղեցիկին ժողովրդական ու տիեզերական ճաւաղը, բոլոր ազբիւրները կատարեալ արձանադործութեան: Բազմաթիւ գրութիւններ մեզ կը հաստատեն միեւնոյն տպաւորութեան մէջ: Հոմերոս Աքիլլէոնն ու Ներէոսը յիշած էր իբրեւ Տրոյի զէմ գուժարուած Յոյներուն մէջէն գեղեցկապոյնները. Հերոդոտոս կ'անուանէ Սպարտացի կալիկրատն իբրեւ Մարդոնիոսի գէմ զինուած Յոյներուն ամենէն գեղեցիկը: Բոլոր դիցաածները, բոլոր մեծ հանդիսութիւնները, գեղեցիկութեան

մրցումի մը ասիթ կ'ընծայէին : Աթէնքի ամենէն գեղեցիկ ծերունիները կ'ընտրուէին՝ ձիթենիի



A. ZARDET sc.

ՊՈՍԻՊՈՆ (Միլոսի մէջ գտնուած)

ոստերը Համաթենական սունին տանելու համար, ամենէն զեզեցիկ մարդիկը՝ նշխար մէջ ընծաներ տանելու համար աստուածուհւոյն : Սպարտա, գիւնոպետիաներու մէջ, այն զօրապետներն ու մեծանուն մարդիկը որ բուական բարձր հասակ եւ արտաքին սեփի ազնուութիւն չունէին, պարսիմբական սողանցութեանց մէջ յետին կարգը կը գրուէին : Լակեդեմոնացիք թէ ուրիշ բանք սելուննայելով, իրենց Արքիգամոս թագաւորը տուգանքի դատապարտեցին, որովհետեւ կարճահասակ կնոջ մը հետ ամուսնացած էր, առարկելով թէ ան իրենց արքայիկներ պիտի տար եւ ոչ թէ արքաներ : Պատանիաս Արկագիոյ մէջ հանդիսատես եղաւ զեզեցիկութեան մրցումներու, որոնց մէջ կի-

ները կը մրցէին իրարու հետ, եւ որոնք ինը դարէ ի վեր կը կատարուէին : Պարսիկ մը, Քսերքսէսին ազգական եւ անոր բանակին ամենաբարձր հասակն ունեցող մարդը, Աքսանթի մէջ մեռած ըլլալով, տեղուոյն ընակիչները անոր ի պատիւ պատարագ մատուցին ինչպէս հե-

րոս մը Եղևտացիք փոքրիկ մեհեան մը կառուցած էին գերեզմանին վրայ Փիլիպպոս անունով  
 կրօնատնացիի մը որ, Ուրմպեան խաղերուն մէջ յաղթական, իրենց մօտ ապաստանած էր, եւ ամե-  
 նէն գեղեցիկ Յոյնն էր իր ժամանակին, ու Հերոփոտոսի օրով դեռ անոր պատարագ կը մա-  
 սուցանէին: — Այսպէս էր այն զգացումը զոր դաստիարակութիւնը մնուցած էր եւ որ, իր  
 կարգին անոր վրայ ներգործելով, անոր իբրեւ նպատակ ցոյց կուտար գեղեցկութեան կազ-  
 մութիւնը: Անշուշտ, ցեղը գե, ցիկ էր. բայց ան սխտեմով գեղեցկացած էր. կամքը՝ բնու-  
 թիւնը կատարելագործած էր, եւ արձանագործութիւնը պիտի լրացնէր ինչ որ բնութիւնը,  
 նոյն իսկ մշակուած, կէս ձգած էր:

Այսպէս, երկու դարու միջոցին, տեսանք մարդկային մարմինը ձեւակերպող երկու հաւ-  
 սատուութեանց, պարարտեանին ու մարմնամարդութեան, ծնիլը, զարգանալը, բովանդակ յունա-  
 կան աշխարհին շուրջը տարածուիլը, պատերազմին դործիքը, կրօնքին զարլարանքը, ժամանա-  
 կադրութեան թուականը հայթայթելը, մարմնական կատարելութիւնն իբրեւ մարդկային կեան-  
 քին նպատակակէտ մատնանիչ ընելը եւ կատարեալ մարմնոյն հիացումը մինչեւ մարդութիւն  
 յառաջ տանիլը: Յամբօրէն, աստիճանաբար եւ քիչ մը հեռուէն, այն արուեստը որ մետաղէ,  
 փայտէ, փղոսկրէ կամ մարմարէ արձանը կը յօրինէ, կ'ընկերանայ դաստիարակութեան որ  
 կենդանի արձանը կը յօրինէ: Միեւնոյն քայլով չ'ընթանար. թէեւ ժամանակակից, այց երկու  
 դարուն միջոցին՝ ան ստորագաս ու պարզ ընդօրինակող մը կը մնայ: Նախ ճշմարտութեան  
 վրայ մտածած են, նմանողութեան վրայ մտածելէ առաջ. նախ ճշմարտ մարմնով զբաղած են՝  
 կերպարանեալ մարմնով մը զբաղելէ առաջ. պարախումբ մը կազմելու հոգ տարած են՝ պարա-  
 խումբ մը քանդակելէ առաջ: Միշտ Ֆիզիքական կամ բարոյական բնատիպարը կը կանխէ այն  
 գործը որ զինքը կը ներկայացնէ. բայց քիչ ժամանակով կը կանխէ զայն. պէտք է որ այն  
 վայրկեանին ուր գործը կը յօրինուի, ան դեռ ներկայ գանուի ամենուն յիշողութեան մէջ:  
 Արուեստը ներդաշնակ ու խոշորցած արձագանք մըն է. իր բոլոր յատկութիւնն ու լրութիւնը  
 կը ստանայ ճիշդ այն վայրկեանէն երբ կը տկարանայ այն կեանքը որուն արձագանքն է ինքը:  
 — Այսպէս է եղած յունական արձանագործութիւնը. ան իր արբունքին կը հասնի ճիշդ այն  
 վայրկեանին երբ քնարական շրջանը կ'աւարտի, այն յիսուն տար իներու միջոցին որոնք Սա-  
 լամինայի պատերազմին կը յաջորդեն, երբ արձակով, տոամով եւ իմաստասիրութեան առաջին  
 հետախուզութիւններովը, մտաւոր նոր զարգացում մը կը սկսի. Արուեստը ճշգրիտ նմանողու-  
 թենէն յանկարծ գեղեցիկ հնարումին կ'անցնի: Արիստոկլէս, Եգեսեան արձանագործները, Ու-  
 նատաս, Քանաքոս, Ռեզիոնացի Պիլթագորաս, Քալամիս, Ագելադաս, շատ մօտէն կ'ընդօրինա-  
 կէին իրական մարմինը, ինչպէս Վերոփիօ, Բոլայոլօ, Կիրլանտայօ, Ֆրա Ֆիլիքօ եւ նոյն իսկ  
 Բերուճինօն. բայց, իրենց աշակերտներուն, Միլոնի, Պոլիկլետի, Փիդիասի՝ ձեռքին մէջ, տես-  
 լական ձեւը երեւան կուդար, ինչպէս Վինչիի, Միքել-Անճելոյի եւ Ռաֆայէլի ձեռքին մէջ:

ԻԲԻՈՒԹ ԹԷՆ



Կ Ո Ի Է Ն Տ Ը Լ Ի Ն

Ա

Մուտ տեղ, սիրակա՛ն,  
 Ի՛նչ անոյշ է սիրել՝ մութ տեղ.  
 Քու աշուրներդ, պայծառ եւ անեղ,  
 Կուռքի մը հայեացքներուն պէս կը շողան.  
 Եւ մեր սըրտերը կը պաղպաղեն:  
 Հեծեծաւոր մըրմունջներով կը հընչեն—  
 Մովի ունայն ասփանց նըման:

Ահա առջիգ՝ գետինն եւս ես  
 Ու կ'ըսեմ՝  
 Ա՛ռ հոգիս, ո՛վ սիրական,  
 Կուէնտըլին, ա՛ռ հոգիս:  
 Ազօտ զանգակ մը կ'ողբայ  
 Ամպերէն հեռու, աշխարհէ հեռու՝  
 Միայնութեան մէջ առանձին.  
 Եւ դու կը խօսիս,  
 Կը փայփայիս զիս,  
 Անպատում ըստփփանքով կը փայփայիս:

Ձեռքըդ պըլխուս վըրայ՝ ես խոնջ եմ եւ հեզ՝  
Կուէնտըլին՝

Կը հաւատամ՝ սիրակա՛ն, կը հաւատամ քեզ՝  
Ի՞նչպէս է սէրըդ՝ որ նըւաճեց զիս.

Ի՞նչ հըզօր մարտիկ է, ի՞նչ ախոյեան,  
Որ նըւաճեց զիս իր երկասարի սըրով  
Կըրքի եւ քաղցրութեան:

Ի՞նչպէս իմ թոքերս կը հալին  
Երբ համբոյրներով բերանս կը ճըմլես:

Կուէնտըլին՝, Կուէնտըլին՝, —  
Ո՛րչափ իմ հողիս լացաւ, տըրորեցաւ

Ո՛րչափ բազկատարած յուսահատեցաւ:  
Եւ ահա կը յառնէ

Քաչէքաչ: Իր հաշմութիւնը ցուցնելով քեզ,  
Դէպ ի քեզ կարկանդակով

Իր կըտըրած թեւերը,  
Ո՛վ ողորմած,

Ահա կ'արտորայ, զէպ ի քեզ կուցայ —  
Բըժըշկէ՛ զանի:

Պիտի բըժըշկենք զայն, կամաց կամաց,  
Ողորմութեան առատ արցունքներով,  
Եւ սիրոյ խարանոց վառ շըրթունքներով:

Բայց ո՞վ կը նայի մեզ —  
Ո՞վ է հող,

Ո՞վ մըտաւ հոս՝ մութ անդը.  
Կուէնտըլին՝ կը նըշմարնու

Միմոսի մը պիղծ կերպարանքն այդանդ,  
Դաման Մաղըը, ոսկի աշուրներով,

Կը նայի մեզ, կը ժըպտի մեզ,  
Արիւնակաթ ասամուռնք ցուցընելով:



Լըռութի՛ւն — ո՞վ սըրտերնուս  
Արծաթի փակեալ զուռ՝

Ետեւըդ կը պըլպըլայ  
Մեր ձիւրանի կանթեղը,

Մեր սիրոյ կանթեղը, —  
Խորհըրդաւոր եւ տըխուր:

Միայնութիւն չէ՞ սէրը,  
Անմատչելի խոր սըրբարան

Ձոր ծածկեցին նըւիրական ստուերները:  
Օրհնելի գիրք չէ՞ սէրը,

Յակինթներու ճարմանդներով աղխաղխեալ,  
Ձոր մեր մաքուր համբոյրներով կընքեցինք:

Կուէնտըլին՝, մեր պաշտելի լըռութեան  
Խանդաղատանքով կը կողկողինք մենք.

Եւ կամաց կամաց անհունութիւն  
Կը հոսի մեր սըրտերուն խորերը:

Ի՞նչպէս ժամանակը, հիւսն կոյր ու դաժան,  
Որ քարէ մըրճերով

Անընդհատ բաղխելով  
Բոլոր խենթութեանց դագաղ կը շինէ,

Կը զայրանայ մեզի զէմ:  
Եւ չըկարծեցի՞նք մենք անմահանալ

Մեր մեծ տարփանքով, մեր մեծ ցընորքով,  
Եւ չըկարծեցի՞նք տաղ մը հիւսել

Խանդի աննըման ճառագայթներով,  
Ահա զայն երկնից եւ երկրի միջեւ

Յաղթականորէն թօթուել ու պարզել:

Չըսի՞ քեզ՝ դու բըժըշկեցիր իմ հողիս,  
Եւ Տըրամութեան ժանտ վըհկութենէն

Դու զայն փրկեցիր:  
Չըսի՞ քեզ՝ դու միայն

Վայելու մն անպատիր դարձուցիր —  
Ո՞վ կուէնտըլին,

Քու շըրթունքները, երկու իժի պէս ահաւոր,  
Անձանօթ համբոյր մը սըւրին ինձի,

Ու գլուխըս թուլացած:  
Կարծես խուռկերով յըզկացած:

Կուրծքիդ վըրայ զըլորեցաւ  
Տըժգոյն աչափակ լըռութեամբ:

Ո՞վ յիմար՝ սէրը մահուան պէս  
Մըշարնջեհաւոր կարծեցի ես:

Նըստէ՛ գիրկըս, Կուէնտըլին,  
Նստէ՛ գիրկըս, եւ թող լամ.

Չատուած էինք եւ վերըստին դըտանք զիրար,  
Կեանքը՝ հրապիտ լըրբին ու չար՝

Նոր քըմահաճոյքով միացուց ըզմեզ:  
Թող սիրոյ սըգաւոր հանդէս

Մեր ճակատներն, իրարու կից քողարկէ  
Մեծարելի եւ սուրբ քողով.

Դու կը լըռես, դու չես զըտնար՝  
Կի՛ն՝ փանաքի արութիւն մ'անդամ,

Երբ ես կուլամ, ա՛յ յայէս կուլամ  
Անմըխիթար, բեկեալ, անյոյս, [լէն.

Ա՛լ թողլիք եղած խաբէութեանց մեղմեղ հոյ-  
Կուրծքըս, սիրտըս կը ջախջախին

Սոսկալի հոընտիւնով, վայրագ հեծեծանքով:  
Ի՞նչ դահիճ է ցաւը՝

Երբ դատաւոր ճակատագիր մը հրամայէ:  
Ո՞վ գիտէ՛ մեր թըշնամին,

Կոյր հիւսնը, անխոնջ եւ ժիր,  
Դադաղ բեւեռոյ ձերուսին,

Թերեւս յաղթէ մեր ը հրոստացման,  
Եւ մեր երկու պինդ ձեռուրներն ան քակէ,  
Եւ մեր կանթեղն ալ խորտակէ:

Մեր սըրբութեան Պիղծ ես՝ ըսէ,  
 Մեր լրտութիւնը խըզէ :  
 Բայց եթէ պարտութիւնք ալ , սի՛րական ,  
 Խըրոխտ պիտի մընանք մենք՝ ո՛չ զըզջացող ,  
 Ոչ դառնութիւն պիտի ժողվենք եւ ոչ ոխ ,  
 Ոչ զօք պիտի նըզովենք ,  
 Այլ պիտի լըռենք — վըսեմացած  
 Արցունքներու շըքեղութեամբ  
 Եւ վըշտի փառքով :



Եւ ճակատըս ճակատիդ ,  
 Քու խընկազոյն խոպոպիքներըդ բըռնած ,  
 Սիրելի՛ս ,  
 Կը խորհիմ , դու ինձի կը նայիս ,  
 Յասպեայ աչու ըներըդ սեւեռելով .  
 Ինձի կը նային  
 Քու աչու ըներըդ՝ որոնց բոլորը  
 Վըշտի ծարրով սեւացաւ :  
 Ո՛րչափ ատեն է այսպէս  
 Կը ճըզնինք մենք մեր առեղծուածը լուծել :  
 Ո՛րչափ ատեն է այսպէս  
 Կը ճըզնինք մենք կարգալու միմեանց հոգին :  
 Եւ կամաց կամաց՝ տըխուր , վըշտաղին  
 Վընատութեամբ կը թուլանանք :  
 Մեր բազուկները կ'իյնան ,  
 Մեր սըրտերը՝ խոնջ՝ ա՛լ կը ճանձրանան —  
 Իրաւ , անձանս՝ թ հնք իրարու :

Ո՛վ Աստուած , ի՛նչպէս կ'ըլլայ  
 Որ այսչափ սիրոյ բըժժանք կախարդանք  
 Ըզմեզ իրարու զօղել չըկըրցան :  
 Ի՛նչպէս կ'ըլլայ որ դեռ հիմայ  
 Այսպէս գըրկապինդ՝ անջատ կը մընանք :  
 Ինչպէս զիրար կը դրկեն բուռն հողմ՝ ու ամպ՝  
 Փայլատակելով հրեղէն տարփամբ ,  
 Բայց իրար բընաւ չեն միանար :  
 Ինչպէս աւազ եւ ծով յանձար կը մըռնչեն ,  
 Փոթորկայոյզ կը հընչեն՝  
 Ամայի , խոր անբաւութեան ձայն տալով ,  
 Բայց դարէ դար որոտալով ,  
 Բընաւ իրար պիտի չըմիանան ,  
 Այսպէս ենք մենք ալ , ո՛վ սիրական .  
 Ի գուր կուլանք կը դողդոջենք ,  
 Անչափ սիրով այլ եւս խոնջ ենք —  
 Մեր բազուկները կ'իյնան ,  
 Մեր սըրտերը՝ խոնջ՝ ա՛լ կը ճանձրանան ,  
 Իրա՛ւ , անձանս՝ թ հնք իրարու :

Ո՛հ , Կուէնտըլին , կը փափաքի՛մ  
 Դունատ կոպերըդ փայփայել ,  
 Դունատ կոպերդ՝ արցունքներով հըրակել ,  
 Եւ կամաց կամաց  
 Զօրաւոր քուս մը տալ քեզ , աղջի՛կ ,

Եւ սպաննել ըզքեզ , աղջի՛կ :  
 Իմ Կուէնտըլինս կը նընջէ ,  
 Պիտի ջայլէի ես ,  
 Խեղակորոյս բանաստեղծի մը նըման  
 Քովըզ նըստած ողբալով .  
 Իմ Կուէնտըլինս կը նընջէ ,  
 Ի գուր լուսինը կը մըրմընջէ  
 Անոր ականջին լուսոտ գըրոյցներ ,  
 Իր կայծալից գիտակին մէջ մտնելով  
 Վէտ ի վէտ կը պաղպաջէ .  
 Իմ Կուէնտըլինս կը նընջէ ,  
 Եւ ա՛լ բնաւ , բնաւ պիտի չարթըննայ :  
 Քար մը դըրի գըլխուն տակ .  
 Ասաւօտեան պէս ըսպիտակ  
 Եւ պարկեշտ է ան ,  
 Ձեռնամած ,  
 Բըբերն ականքներու պէս շողուն  
 Եւ արծաթով ընդեղուզեալ ,  
 Ոչ երազ կը տեսնէ ան եւ ոչ տեսիլք :  
 Ա՛լ իմ է հիմայ , իմ յաւիտեան ,  
 Իմըս են վերջին սիրոյ խօսքերը ,  
 Անսուտ , աննեղ , անփոփոխական :  
 Եւ պիտի հըսկեմ գիշեր ցորեկ ,  
 Եւ իմ համբոյրներս պիտի չըլըսեն .  
 Մինչեւ որ ան ալ զիս ըսպաննէ  
 Իր կապուտակ շըթուռքներով ,  
 Իր անբարբառ շըթուռքներով :



Ի՛նչ խորհըրդական ցոլք հըրայրք  
 Կը բորբոքի մեր աւջեւը .  
 Երկինք կը բոցստի  
 Ահաւոր անձայն փայլակնաթափութեամբ ,  
 Խաղաղ է ամառ գիշերը , Կուէնտըլին ,  
 Խաղաղ եւ անամպ .  
 Բայց մեր ըզձանքները կը կողկողին ,  
 Մեր բերանները կը բուրեն սիրով :  
 Եւ իրարու վըզէն բռնած՝  
 Կը քամենք իրարու շըրթուռքները  
 Դատապարտեալներու կատաղութեամբ ,  
 Ի՛նչպէս տըժոյցն ենք ,  
 Ի՛նչպէս բըբերըդ կը խոլոսին —  
 Կուէնտըլին :  
 Մի՛ զարհուրիր , տարփալըլուկ կոյս ,  
 Թող մեր համբոյրներն աւելի զայրանան ,  
 Ամուլ սիրով խօլանան —  
 Երբ փայլակները  
 Կը փայփային մեր մաղերը :

ՎՍՀՐԱՄ ՍՎԱՃԵՆՆ

Նիւ-Եորք, Յուլիս

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՅՐԱՆՔՕ-ԹՈՒՐՔ ԱՆՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ : — ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ  
ԵՒ ՅՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ : — ՍՈՒԼԹԱ-  
ՆԸ ՎՐԴՈՎԱԾ :

- 0 -

ՅՐԱՆՔՕ-ԹՈՒՐՔ ԱՆՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ . — Քաղաքական կացու-  
թիւնը, այս վայրկեանիս, անդով լեցուն է, եւ  
թերեւս յոյսերով ալ՝ մեզի համար :

Ֆրանսա իր զիւնագիտական յարաբերու-  
թիւնները խղած է Տաճկաստանի հետ, որով-  
հետեւ Սուլթանը խարդախ ու անպատկառ  
վարմունքով մը վիրաւորեց Ֆրանսայի արժա-  
նապատուութիւնը : Պ. Գոնսթան մեկնեցաւ  
Պոլսէն, եւ Միւնիքի Պէյ, Սուլթանին այդ ճար-  
պիկ ու զազիր գործիքը, ճամբու դրուեցաւ  
Ֆրանսայէն : Ֆրանսական կառավարութիւնը  
որոշած է ձեռք առնել հարկաւոր միջոցները՝  
Սուլթանը պատժելու համար, թէ ի՞նչ են այդ  
միջոցները, դեռ ոչ ոք գիտէ, թէ ե՞րբ պիտի  
գործադրուին, ոչ ոք գիտէ նմանապէս. կը  
կարծուի թէ Չարին ի Ֆրանսա այցելութենէն  
ետքն է որ Ֆրանսական կառավարութիւնը  
պիտի սկսի «գործել» : Եւ խնդիրը այժմ  
այնպիսի ծանր հանգամանք ստացած է որ  
նոյն իսկ եթէ Սուլթանը հատուցանէ երկու  
ֆրանսական պարտապահանջներուն պա-  
հանջքը, Ֆրանսա չի կրնար առով ինքզինքը  
գոհացած նկատել : Սուլթանը անարգած եղաւ  
Ֆրանսան. Ֆրանսան պարտաւոր է «պատժել»  
Սուլթանը, ասի թանկագին առիթ մըն է Ֆը-  
րանսայի համար՝ ուժ ցոյց տալով վերստանա-  
լու իր վարկն ու ազդեցութիւնը զոր ատենով  
ունէր Արեւելքի մէջ եւ զոր կորսնցուց հայ-  
կական առգնապիւն միջոցին Հաննոթոյի դահ-  
լիճին վատութեամբը : աններելի պիտի ըլլար  
որ ֆրանսական արդի կառավարութիւնը փախ-  
ցընէր այս առիթը :

Աններելի պիտի ըլլար մանաւանդ եթէ Ֆը-  
րանսա այս առիթէն չօգտուէր՝ Սուլթանին  
բոլոր զոհերուն օքնութեան ձեռք մը կառկա-  
ռելու համար : Բաց ի մարդասիրական բարձր  
տեսակէտէն, նոյն իսկ ֆրանսական շա-  
հերուն անձուկ տեսակէտովը՝ անհրա-  
ժեշտ է որ ֆրանսական կառավարութիւնն  
ընդլայնէ ֆրանքո-թուրք անհամաձայնութիւ-  
նը եւ Սուլթանէն պահանջէ, ոչ միայն երկու  
անհատի պահանջքին հատուցումը, այլ եւ, ու  
մանաւանդ, գործադրութիւնն այն հիմնական  
բարենորոգումներուն որոնք Տաճկաստանը պի-  
տի զարձրնեն բնակելի եւ քաղաքակիրթ եր-  
կիր մը : Ֆրանսական մատուլին մէջ այս մի-  
ջոցիս այս իմաստով բազմաթիւ յօդուածներ  
կ'երեւան Ռուանէ, Բելթան եւ ուրիշներ բա-  
ցատրեցին թէ Սուլթանին լրբութիւնը ար-  
դիւնքն է այն անտարբերութեան զոր ցոյց

սուաւ Հաննոթոյի Ֆրանսան՝ հայկական եւ յու-  
նական խնդիրներու միջոցին, եւ թէ որպէս  
զի ապագային մէջ Ֆրանսայի արժանապատ-  
ւութիւնը գարձեալ չվտանգուի Արեւելքի մէջ,  
անհրաժեշտ է որ ֆրանսական կառավարու-  
թիւնը այժմ ամէն միջոց ի դորձ դնէ, ոչ թէ  
զրամական խնդիր մը կարգադրելու, այլ Տաճ-  
կաստանը հիմնովին բարենորոգելու համար :  
«Մաթէն»ը ուժգին պայքար մը սկսած է Սուլ-  
թանին եւ զոռուլի Միւնիքիին դէմ : «Թան»ը  
իր սեպտեմբեր 14ի թիւով հրատարակեց հո-  
յակապ առաջնորդող մը, «Ի Հայաստան» վեր-  
նագրով, որ կը նկարագրէ Թրքահայաստանի  
արդի տնտես կացութիւնը եւ պարտք կը դը-  
նէ եւրոպական պետութեանց վրայ որ փու-  
թան հյօր միջամտութեամբ մը վերջ դնել այդ  
կացութեան : այդ յօդուածը կ'աւարտի հետեւ-  
եալ տողերով :

«Ամէն ոք գիտէ թէ վայրկեանը հանդի-  
սաւոր է : Հանդիսաւոր է այդ դժբաղդ ժո-  
ղովրդին համար (Հայոց) որ մահացու հա-  
րուածին կը սպասէ : Հանդիսաւոր է այն  
ընծիմին եւ այն մարդուն համար, որ երկ-  
րորդ անգամ ըլլալով պիտի ստանձնեն պա-  
տասխանաւորութիւնը մարդկային խղճին  
դէմ ուղղուած այսպիսի թշնամանքի մը :

«Հանդիսաւոր է մանաւանդ Եւրոպայի հա-  
մար, քաղաքակիրթ ըստած պետութիւննե-  
րուն համար որոնք չեն կրնար ձեռքբերին  
լուալ այդքան թափուած արիւնէ, որոնք ար-  
դէն իրենց համաձայնութեան սնանկին  
տխուր տեսարանն ընծայեցին առաջին կո-  
տորածներուն ատենը, եւ որոնք այս պահու-  
ղեա միջոց ունին ձեռքբերին՝ այդ անելի  
ղէպերուն կրկնուան արդիւնքու եւ Հա-  
յաստանին շնորհելու հանդուրժելի կացու-  
թիւն մը, Թուրքիոյ ապահովութիւնը եւ  
ըրաշխաւորելով եւ աշխարհի խաղաղութիւ-  
նը պահպանելով հանդերձ :

«Պէտք է յուսալ որ զիւնագիտութիւնը  
պիտի գիտնայ սրբազան գործի մը զինքը  
կարող ցոյց տալ, եւ թէ պիտի ըմբռնէ որ  
այսպիսի վայրկեանները էականօրէն կարճ  
ու խուսափուկ են եւ անգամ մըն ալ չեն  
հանդիպիր »

Հայաստանի կացութիւնը, ջարդերուն վեր-  
սկսումը, Սասունի պաշարումը, որ կը զուգա-  
դիպին այս ամենուն հետ, անհնար է որ ֆրան-  
սական կառավարութեան ուշադրութիւնը  
չգրաւեն՝ այժմ աւելի սուր կերպով քան եր-  
բեք : Եւ արդէն կարգ մը կարեւոր ֆրանսացի  
հայասէրներ, — գլխաւորապէս ֆրանքո-հայ-  
կական քոմիթէի անդամները, — իրենց պարտք  
համարեցին ֆրանսական կառավարութեան  
յայտնել թէ անհրաժեշտ կը նկատեն որ ֆրան-  
քո-թուրք անհամաձայնութիւնն ընդլայնուի  
եւ Ֆրանսա պահանջէ Սուլթանէն, ոչ միայն  
քանի մը միլիոնի խնդրոյն լուծումը, այլ եւ  
լուծումը հայկական խնդրոյն, կամ զոնէ բա-

ցարձակ դադարումը ջարդերուն եւ սխտեմա կան հաշմանքներուն :

Պ. Տընիս Գոչէն, անդամ ֆրանքո-հայկական ընկերութեան, որոշած է խորհրդարանին բացմանը հարցապնդում մը ուղղել՝ Հայոց արգի կացութեանը վրայ :

Կը կարծուի թէ Չարն եւ իր կառավարութիւնը տարակարծիք պիտի չըլլան իրենց դաշնակցին հետ՝ այդպիսի դործունէութիւն մը ձեռնարկելու համար :

Վայրկեանը պատեհ է քան երբեք որպէս զի Ֆրանսա եւ Ռուսիա յիշեն թէ իրենք այն երկու երկիրներն են եղած որ Արեւելքի քրիստոնէից պաշտպանութեան դերն ստանձնած են յաճախ անցեալին մէջ : Մակեդոնիա տակնուվրայ, Հայաստան արիւնլուսոյ՝ օգնութեան կը սպասեն : Երանի՛ թէ միամիտ երազ մը անուցած չըլլայինք՝ յուսալով որ Գոմբիէնի ֆրանքո-ռուս տեսակցութիւնը արեւելեան ինդրոյն արգար ու հիմնական լուծման առաջնորդող դէպք մը կրնայ ըլլալ :

Յ. Գ. «Թան»ն իր սեպտ 14ի թիւովը հրատարակեց հետեւեալ կարեւոր լուրը .

«Պ. Տեղբասէ այսօր ընդունեցու Պ. Բիէր Բիյարը, խմբագրապետ «Բրօ Արմենիայ»ի, որ իրեն յանձնեց նուազագոյն բարենորոգմանց ծրագիր մը թրքական Հայաստանի նահանգներուն համար, խմբագրուած Իբօշակիան կուսակցութեան կողմէ, եւ մասնաւորապէս անոր ուշադրութիւնը հրաւիրեց հայկական նահանգներու վիճակին, Զէյթունի, Սասունի, Մուշի եւ Տիարպիթի մէջ մօտալուս ջարդերու հաւանականութեան վրայ, եւ Հայոց կողմէ արեւնայից վրէժխնդրութեան ձեռնարկներու վրանդին եթէ անոնց կացութիւնը զարմանելու հոգ չտարուի :»

Ես վերջին ծայր ուրախ եմ որ Դրօշակեան կուսակցութիւնն ըմբռնած ըլլայ արգի կացութեան բարեպատեհ հանգամանքն եւ գաղափարն ունեցած ըլլայ Ֆրանսացի հայասէրներու աջակցութեամբ Պ. Տեղբասէին զիմելու՝ որպէս զի Ֆրանսա՝ ֆրանքո-թուրք գժտութիւնէն օգտուելով թրքական Հայաստանը բարեկարգելու նախաձեռնութիւնը ստանձնէ : Միեւնոյն ատեն կ'իմանամ որ Պ. Համբարձում Առաքելեան, որ անցեալ տարի Բարիզի Սաբաղութեան համաժողովին ներկայացուց յիշատակադիր մը թրքական Հայաստանի կացութեան վրայ, Կլասկոյի Համաժողովին գացեր է այս պահուս ներկայացնել զարձեալ մանրամասն յիշատակադիր մը թրքական Հայաստանը բարելաւող արգի ահուրի դէպքերուն մասին : Այդ յիշատակադիրը, ֆրանսերէն լեզուով, տպուած է 63 էջէ բազկացած դրքոյկի մը ձեւով :

Համաժողովը մեծ համակրութեամբ ընդունած է այդ յիշատակադիրը եւ հետեւեալ որոշութիւնը վճած է . «Ուղարկել Պերլինի

դաշնագիրն ստորագրող եւրոպական պետութիւններուն խնդրագիր մը, որպէս զի պաշտօնական դիտարկութիւնը մը գումարեն լուծելու համար հայկական հարցը, գործադրելով 1895ի մայիսի բարենորոգումներու ծրագիրը, զոր խմբագրած են անգլիական, ֆրանսական եւ ռուսական կառավարութիւններն, որ ընդունուած է նոյն իսկ Սուլթանին կողմէն :» Կլասկոյի համաժողովը ստացեր է հետագիր մը որ կը հաղորդէ թէ՛ «Միացեալ Նահանգներու խաղաղութեան ընկերութիւնները ուղիւ մը սկսած են ստորագրել տալ ամերիկեան ժողովրդին, ուղղուած Միացեալ Նահանգներու նախագահին, որպէս զի ան միջնորդէ եւրոպական պետութեանց մօտ, Դեսպանաժողով մը գումարելու համար՝ հայկական հարցը լուծելու նպատակով, Նմանապէս Պ. Ֆրետերիք Բասի, խաղաղութեան գաղափարին ալեւոր եւ բազմադիրն ախոյեանը Գոմբիէնը ուղարկած է Ֆրանսայի խաղաղասիրական ընկերութեանց կողմէն՝ ուղերձ մը, խնդրելով Չարն եւ Պ. Լուպէէն որ խաղաղութիւնը տեսական եւ ազնիւ հիմերու վրայ գնելու համար ջանագիր ըլլան լուծել զատը տառապող ժողովուրդներուն, որոնց կարգին մէջ առաջին սեղը կը բռնէ հայ ժողովուրդը :

Իսկ վերջին պահուն կ'իմանամ որ վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը նոթ մը զրկած է Գոմբիէնը, Պ. Լուպէին եւ Չարին ուղղեալ, հրաւիրելով ֆրանսական եւ ռուսական կառավարութեանց ուշադրութիւնը Հայաստանի արգի կացութեան վրայ, եւ առաջարկելով որ այդ երկու կառավարութիւնները նախաձեռնութիւնն ունենան ազդեցիկ գործունէութեան մը՝ հայկական խնդիրը արմատապէս լուծելու համար : Ինծի կը հաղորդեն թէ Ֆրանսացի կարեւոր անձնուրութիւններ իրենց աջակցութիւնը խոստացած են որպէսզի այդ ծախքն կատարուի անուրի :

Այս բոլոր դիմումները, ժողովրդի մը կողմէ որ ահաւոր մարտիրոսութեան մը խորէն, խորխաւար եւ անվհատաբար իր իրաւունքը կը յամառի պահանջել եւրոպայէն, չեն կրնար ապարդիւն մնալ : Ուշ կամ կանուխ անժամ իրենց պատուը պիտի տան :

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԽԵՂԻՐԸ ՈՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ :— «Լա Լիպէրթէ» լրագիրը հրատարակած է իր 15 սեպտ. թուով ծանօթ ֆրանսացի հայասէր Պ. Տընիս Գոչէնի հետեւեալ նամակը :

«Պարոն տնօրէն «Լա Լիպէրթէ» լրագրի : «Հաճեցաք ծանուցանել հարցապնդումը զոր պիտի ընեմ մեր Արեւելքի կրօնական հաստատութեանց մասին : Պիտի խօսիմ նաեւ, եւ չընտրապարտ պիտի ըլլամ ձեզի եթէ զայս ալ ծանուցանէք, Հայոց արգի կացութեանը եւ այն դէպքերու մասին որ տեղի ունեցած են Սասունի, Մուշի մէջ, այսինքն այն տեղուանքը ուր վեց տարի առաջ սկսան Հայաստանի կու

տորածները: Կը փութամ ըսել թէ անցած տարի, նմանօրինակ սփրինքերու կրկնուած վտանգին առաջին անուեցաւ ժամանակա- յարմար ու կորովի միջոցներով (\*). պիտի չմոռնամ զայդ յիշել, երբ Խորհրդարանին վե- րաբացմանը՝ հարցազնուումս ուղղեմ Արտա- քին Գործոց նախարարին:

«Բայց մեր Պոլսոյ գեապանը պէտք է միտքը դնէ որ պէտքերը պիտի ընդլայնեն ֆրանքո- թուրք անհամաձայնութեանց այն հողը զոր ինք ընտրեց, — այսինքն գործի խնդիրներու հողը:

«Անշուշտ պէտք է որ նախանձախնդիր ըլ- անք մեր ազգակիցներուն իրաւունքները պաշտպանելու. եւ անհրաժեշտ էր Սուլթանէն պահանջել նոյն իսկ իր դատարաններուն ար- ձակած վճիռներուն գործադրութիւնը: Բայց վերջապէս, եթէ մեր հաստատութիւնները վը- տանդի մէջ մնան, եթէ մեր քրիստոնեայ պաշտպանները շարունակուին Բիւրոս- րէն ջարդուելի, Ֆրանսայի հանրային կարծիքը պիտի չբաւականանայ Պ. Պ. Լորանտոյին եւ Թուրքիոյն արուած դոհացումովը: Եւ Սուլ- թանը, եթէ դնէ, նոյն իսկ շատ սուղ գնով, Պոլսոյ քարափները, ատով մեզի հետ իր բոլոր հաշիւը կարգադրած պիտի չըլլայ՝ եթէ նորէն զանոնք հայ արխիւով ողողէ:

«Թերեւս Մուշի եւ Սասունի խռովութիւն- ները նուազ կարեւոր են քան ինչ որ կը կարծենք: մաղթելի է որ այդպէս ըլլար: Բայց 1895ի, 1896ի չարագուշակ յիշատակները պէտք է որ եւրոպական կառավարութիւնները մղեն ուշադիր ըլլալու:»

Ֆրանքո-ուսնիդակակցութեան մասին շա- հեկան յօդուածի մը մէջ, Պ. Էրնէսթ Լալիս, բացատրելով այն մասը զորը զոր ան պիտի կա- տարէ երբ երկու կառավարութիւնները գիտ- նան փոխադարձ զոհողութիւններ ընել երկու երկիրներուն շահերուն հաւասար պաշտպան- ման համար, կը յիշէ թէ անցեալին մէջ եղած են դժբաղդ պարագաներ ուր ֆրանսաւոյդ նի- զակակցութեան հետեւանքով, ստիպուեցաւ շատ մեծ զոհողութիւններ ընել. այդ պարա- գաներուն գլխաւորն, ըստ Պ. Լալիսի՝ հայկական խնդիրն է:

«Այս «Հանդէս»ին մէջ մենք արդէն յայտնած ենք կը գրէ Պ. Լալիս, թէ զոհողութեան բա- ժինը շատ մեծ եղաւ Ֆրանսայի համար՝ Ա- րեւելքի տխուր դէպքերուն մէջ, Հայաստանի ջարդերուն հետեւանքով բացուած տաքնապին տանը: Այդ հրաժարումը իր ամենէն ազ- նիւ աւանդութիւններէն, որոնք քրիստոնեայ ֆրանսայիներն էին որքան յեղափոխական Ֆը- րանսայիներ, եւ մեր շահերուն այս լքումը, շատ ծանր յանցանք մը թուեցաւ մեզի: Կրկին

(\* ) Պ. Տընիս Գոչէն կ'ակնարկէ Մերօին զրկուած ֆրանսական նաւատորմին:

հաճոյակատարութիւնը՝ հանդէպ Հայերը ջար- դող Սուլթանին եւ հանդէպ Ռուսիոյ, որու կառավարութիւնը այն միջոցին կը թուէր անտարբեր աչքով նկատել կոտորածները, այն- քան տարօրինակ է որ մարդ պարտուոր է զայն բացատրելու համար թաքուն մտածում մը են- թագրել: Այն պահուն ուր ֆրանքո-ուսնի ի- զակակցութիւնը երեւան հանուեցաւ, կարծես թէ աշխարհս վեր վերցնելու կարող լծակ մը համարեցին զայն: Մեծ երազը փարատեցաւ, աւա՛ղ: Վտանգաւոր էր, կամ դոնէ տարածամ, այդ համաձայնութեան սկզբնական ու իրա- կան իմաստն այդպէս ընդլայնելը: Ատով ու- ըրիչ բան չչահեցանք բայց եթէ թողուլ որ լայննայ Հայաստանի արխիւտա արատը, ի վնաս մեր պատուին եւ մեր շահերուն:»

Այն միջոցին ուր ջարդերը վերսկսած են Հայաստանի մէջ եւ երբ Չարը Ֆրանսա կու- գայ, Պ. Լալիսի այս սուղերը մեծապէս նշանա- կալից են եւ առանց աղքեցութեան չեն կրնար մնալ: — Եւ Պ. Լալիս իր յօդուածը կ'աւար- ակէ արդէն յոյս յայտնելով որ ֆրանքո-ուսնի- զակակցութիւնը հեղաշեւէ պիտի ձգար անէն աշխարհ ընթացք մը ուր երկու կողման շա- հերն իրարու հետ պիտի կարենան համաձայնիլ փոխադարձ զոհողութիւններով՝ ամէն խնդիրնե- րու մէջ:

ՍՈՒԼԹԱՆԸ ՎՐԴՈՎԱԾ. — Պ. Տելքասէ ո- րոշած է գործել ի նպաստ Հայոց:

Այդ մասին արդէն տեսակցութիւն մը ու- նեցած է Ռուսիոյ արտաքին գործոց նախա- րար Լամատորֆ կոմսին հետ: Եւ ամենասուտոյց աղբիւրէ կը հազորդեն թէ Պոլսոյ առւսական գեապանը Պ. Չենովիեֆ, այդ տեսակցութեան հետեւանքով որոշուած է Բարիկ կանչուել:

Ու «Թայմզ»ը իր 16 սեպտեմբերի թիւին մէջ կը հրատարակէ հետեւեալ հետազիրը:

«Պոլիս 16 սեպտեմբեր. — Եախարարական շրջարեբական մը կը զեկուցանէ վալիներուն թէ Սուլթանը կը փափաքի որ բարեկարգու- թիւնն ու անդորրութիւնը տիրեն ամէն կողմ Օսմանեան պետութեան մէջ եւ ապահովու- թիւնն ու արգարութիւն վայելեն բոլոր զեպե- րը եւ բոլոր կրօնքները. ամէն անկարգու- թիւն պէտք է խեղդուի հանրային ուժին շը- նորհիւ՝ առանց բնակիչներու օգնութեան դի- մելու: Մշտական աջալըջութիւն մը կը հրա- մայւելի, բնակիչներուն միջեւ դժգոհութեան կամ կոռիւի շարժանիքներու առաջին անգամը:»

«Մուշի եւ Էրզրումի գաւառներուն մէջ վեր- ջերս պատահած դէպքերն են որ այս շրջա- րեակներին ուղարկման դրդիչ են եղած: Սուլթանը մեծապէս կը վախնայ որ իրեն հա- կառակ եւրոպական համաձայնութիւն մը կը կազմուի:»

### ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՔԱՐԻՉԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ. — ՊԵՐՊԵՐ-  
 ԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԻ ՔՍԱՆԵՒՀՆԻ ԳՄԵԱԿԸ.  
 «ՓԱՐՈՍ»-Ի ՎԵՐԵՐԵՒՈՒՄԸ :  
 — Պ. ՔԱՇԻՆՆԱՂԵԱՆ .

Բարիզի հայկական եկեղեցին. — Բարիզի հայ-  
 կական եկեղեցւոյն շինութիւնը ծրագրի ձեւէ  
 իրականութեան ձեւի սկսաւ մանկ : Պ. Ման-  
 թաշեան գնամ է արդէն հողը , ժամ կուժոն  
 փողոցին մէջ , 400,000 ֆրանքի : Ճարարա-  
 պետ կարգուած է Մեծ Օրերային կառուցիչ մե-  
 ծանուն Շարլ կարնիէի որդին , որուն պիտի  
 աշխատակցի ծանօթ հայ արուեստագէտը , Պ.  
 Սոփոն Պէզիրճեան :

Պերպերեան վարժարանի ֆանկեհնգումեակը .  
 — Կ'իմանանք որ Պերպերեան վարժարանին  
 նախկին աշակերտները որոշեր են տօնել ի  
 մօտոյ այդ հաստատութեան քսանեւէնդամե-  
 եակը , որ կը լրանայ հոկտեմբեր 1ին : Մաս-  
 նախուժը մը կազմուած է Պոլսոյ մէջ՝ Պեր-  
 պերեան նախկին սաներէ , նախագահութեամբ  
 Օրմանեան պատրիարքին , որ մասնաւոր կոն-  
 դակով մը հրաւէր կը կարգայ բոլոր կրթասէր  
 ազգայիններուն՝ իրենց նիւթական աջակցու-  
 թիւնը շնորհել որպէս զի այդ հաստատութիւնը  
 շարունակէ , աւելի ընդարձակուած , իր ար-  
 դիւնաւոր գործունէութիւնը :

«Փարոս»ի վերեւելումը . — Պ. Յ. Արիար կը  
 ծանուցանէ՝ շրջաբերականով մը՝ թէ «Փարոս»  
 լրագիրը, զոր հիմնած էր Գահիրէի մէջ 1897ին,  
 պիտի վերատիւն սկսի հրատարակուել սեպ. 19ին :  
 «Մեր արաջին թուոյն վերապահելով, կը դը-  
 թիւններու վրայ որոնք այս անգամ հիմնա-  
 կան , կանոնաւոր եւ փայլուն պիտի ընեն մեր  
 թերթի վերերեւումը , ներկայիս պատիւն ու-  
 նինք ծանուցանել թէ «Փարոսի երկրորդ  
 շրջանի առաջին թիւը հրատարակ պիտի ելլէ  
 յառաջիկայ սեպտեմբեր 19ին 1901 , եւ պիտի  
 հրատարակուի շաբաթը երեք անգամ , երեք-  
 շաբթի , հինգշաբթի եւ շաբաթ օրերը , նախկի-  
 նէն աւելի մեծ ծաւալով եւ եզրագտորի ու ար-  
 տասանմանի լաւագոյն զրիչներու աշխատակ-  
 ցութեամբ : »

Պ. Բաշինցաղեան . — Պ. Գէորգ Բաշինցաղեան  
 մտադիր է քիչ օրէն մեկնել Բարիզէն : Իր նը-  
 կարներու ցուցահանդէսը (132 Bd. Montpar-  
 nasse) պիտի փակուի ուրեմն ի մօտոյ : Յետք  
 որ զեռ առիթ չեն ունեցած տեղնելու տաղան-  
 դաւոր արուեստագէտին գործերը, թող փութան  
 այս վերջին մէկ քանի օրերէն օգտուել :

### ԳՐԲԵՐ ԵՒ ԹԵՐԹԵՐ

ՊԱՏՈՒՈՅ ԱՏԵԱՆԸ ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ . —  
 ՀՈԳԵՐ , ՎԱՀԱՆ ԹԵՔԵՍՆԻ —  
 ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ :

Պատուոյ ասեանք եւ հայ մտնուրը . — Կարգ մը  
 հայ թերթերու մէջ (քուրջերու մէջ՝ պէտք է  
 ըսել մանաւանդ) շատ մը ազոտութիւններ  
 զեւեղուեցան Պ. Իսքէնտէրի եւ իմ պահան-  
 ջովս կատարուած պատուոյ ասեանին առթիւ :  
 Բնաւ ստորագրութիւն չդնող կամ ստանունի-  
 բու ետեւ պահուրտող վատեր ապուշութեան եւ  
 ցածութեան կուտակուած պաշար մը հրապա-  
 րակ նետեցին՝ «օտաւար»ի անհաստուն ու  
 իւզոտ պերճախօսութիւնով մը Այնպիսի պա-  
 հու մը ուր հայ ժողովուրդը , նորէն զարնու-  
 ընլի տագնապի մը ենթարկուած , պէտք ունի  
 իր բոլոր զաւկներուն ճիղին՝ որպէս զի իր  
 ցաւերը թիթեւնան , եւ ոչ արամազրութիւն  
 կը զգամ , ոչ ստեն ունիմ , — զբաղած՝ շատ  
 աւելի լուրջ եւ ազնիւ ձեռնարկներով , — այդ  
 փախուցներուն վրայ պէտք եղածն ըսելու :  
 «Անահիտ»ի յաջորդ թիւերէն մէկուն մէջ  
 պիտի հրատարակուի վերջնական եւ ամբող-  
 ջական ուսումնասիրութիւն մը Պ. Պ. Բաշ-  
 քաճեանի եւ Գայեանի եւ իրենց ամէն տե-  
 սակ մեղսակիցներուն հրէշութիւնը վերլու-  
 ծող , եւ այդ յօդուածը որ պիտի երեւայ երբ  
 հանրային տեսակէտով շատ աւելի կարեւո-  
 րութիւն ունեցող կարգ մը գործեր աւարտած  
 ըլլամ , եւ երբ միանգամայն ճշգրտ ըլլամ  
 խել մը մանրամասնութիւններ՝ պատուոյ  
 ասեանին շուրջը վխտացող զեւեղներուն մա-  
 սին , պիտի լրացնէ այն օգուտը զոր անա-  
 րակուսելի կերպով պիտի ունենայ այս պա-  
 տուոյ ասեանը , երեւան հանելով մեր ազգային  
 բարոյականին համար խորապէս վնասական  
 հանրային գործունէութեան զէմ միշտ խոչըն-  
 գոտ հանցիսացող կարգ մը թունաւոր տարրեր,  
 որոնք անհրաժեշտ է որ ճանչցուին եւ ջնջուին  
 վերջնապէս :

ՀՈԳԵՐ , Վահան Թեփեկեանի . — Պ. Վահան Թե-  
 քեան , մին մեր նորագոյն գրականութեան  
 ամենէն ինքնատիպ եւ ամենէն նուրբ արու-  
 եստագէտներէն , հատորի մը մէջ — զոր ախող-  
 ւած է «Հողեր» , — ամփոփած է իր օտանաւոր  
 եւ արձակ քերթուածները որոնց մէկ մասը  
 լոյս տեսած է «Մաղիկ»ին , «Անահիտ»ին եւ  
 արտասանմանի ուրիշ մէկ քանի թերթերու մէջ :  
 Այդ շատ սիրուն հատորին վրայ , ուր իրա-  
 պէս բանաստեղծ խառնուածք մը իր ներքին  
 բուրաստանին բոլոր ծաղիկները , — ծաղիկներ  
 նուազկոտ շնորհի , — վայելչահիւս փունջով  
 մը ի լոյս է գրեր , «Անահիտ»ի յառաջիկայ թի-  
 ւերէն մէկուն մէջ պիտի յայտնուի տպաւորու-  
 թիւնս :

Միտքեան խնդիրը. — «Նոր կեանք»ի 14րդ թիւը կը պարունակէ նախօրում մը որ կը յայտարարէ թէ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը անկեղծօրէն փափաքող է յեղափոխական մարմիններու միութեան, եւ թէ ինքը պատրաստ է ամէն զոհողութիւն յանձն առնելու, որպէս զի միութիւնը իրականանայ, պայմանով որ իւրաքանչիւր կողմէ անկեղծ, անշահախնդիր եւ եղբայրական ձգտում մը ցոյց տրուի այդ միութիւնը կատարելու : «Նոր կեանք»ի այդ յօդուածը պարունակող թիւը կ'երևար երկու օր առաջ «Անահիտ»ի վերջին թիւէն, որուն մէջ փափաք կը յայտնէի որ Վերակազմեալ Հնչակեանները փութային ջանքեր ընել միանալու յեղափոխական ուրիշ մարմիններու հետ : Ես շատ դո՛ւ հմ որ Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը, առանց ո եւ է խորհուրդի կամ թելադրութեան սպասելու, ինքնաբերաբար խորհած ըլլայ իր ճիշդերուն առաջինն ընել միութեան խնդրոյն լուծումը : Այդ յօդուածով Վեր. Հնչակեան կուսակցութիւնը կը յայտարարէ թէ պատրաստ է մինչեւ իսկ ջնջել «Հնչակեան կուսակցութիւն» անունը եւ զազրեցնել իր պաշտօնական հրատարակութիւնները, թէ իր կեդրոնական վարչութիւնը տրամադիր է ամբողջութեամբ հրաժարելու՝ ապագայ միացեալ մարմնոյն մէջ պաշտօն չստանալու խոստումով : Վեր. Հնչ. կուսակցութիւնը կը պահանջէ որ միեւնոյն զոհողութիւններն ընդունին միակուսակցութիւններն ալ, եւ նոր, ձուլուած, հզօր մարմին մը կազմուի, բոլոր հայ յեղափոխականներուն համակրութիւնն ու վստահութիւնն իր վրայ կեդրոնացնող :

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը անցեալին մէջ յայտարարած է մէկ քանի անգամ թէ համակիր է միութեան գաղափարին եւ փափաքող անոր իրականացման : Յուսալի է ուրեմն որ Վեր. Հնչ. կուսակցութեան այս հրատարակչին առաջարկը պիտի ընդունի հաճոյքով եւ պիտի ցոյց տայ զոհաբերութեան եւ համաձայնութեան այն ուրին որ անհրաժեշտ է որպէս զի այսպիսի մեծ ձեռնարկ մը յաջողի : Յեղափոխական միւս մարմիններն ալ ո եւ է պատճառ չեն կրնար ունենալ հիմա՝ Վեր. Հնչ. կուսակցութեան այս առաջարկէն չօգտուելու, որպէս զի ընդօրոյթ կատարուի միութիւնը որուն կը փափաքի ամբողջ ազգը :

Այս վայրկեանիս, անաւոր կացութեան մը մէջ է նորէն մեր հայրենիքը. ջարդերը վերսկսած են. վտանգի մէջ է Աստուրը, եւ վտանգը կրնայ տարածուիլ նորէն մեր գծադղ հողին մէկ ծայրէն միւսը. անհրաժեշտ է որ գործօն ուժերը բոլոր ներքին երկպառակութիւնները ջնջեն այլեւս, — անմիջապէս, մէկ հարուածով, առանց ո եւ է վարանումի կամ կասկածանքի : «Նոր կեանք»ի յօդուածը գործնական եղանակ մը չէ ճշգրտ միութիւնը կատարելու համար. այդ եղանակը դժուար չէ

զտնել իրենց համար. իւրաքանչիւր մարմին մէկ քանի լիազօր ներկայացուցիչներ կը կարգէ իր վարիչներէն. այդ լիազօրները կը գումարուին տեսակ մը համաժողովի մէջ, իրենց իրեւ աջակից եւ խորհրդական հրաւիրելով միանգամայն մէկ քանի փորձառու հայասէր եւրոպացի գործիչներ, եւ անկեղծօրէն, եղբայրօրէն կը վիճին այն բոլոր ընդհանուր շահերու վերաբերող խնդիրներուն վրայ որոնց վրայ պէտք կրնայ ըլլալ վիճելու, կը ճանչնան իրար եւ շատ մը անխուստ թիւրիմացութիւններ կը փարատին, ու կ'որոշեն այն ձեւը որով պիտի միանան կուսակցութիւնները, կը սահմանեն անունը զոր պէտք է կրէ միացեալ մարմինը, ինչպէս եւ անունը միակ օրիակին զոր ան պիտի ունենայ, կը կազմեն վարիչ մարմին մը որ իր մէջ կ'ամփոփէ բոլոր կուսակցութիւններուն լաւագոյն գործիչները, եւ կը համաձայնին ապագայ գործունէութեան ընդհանուր ծրագրի մը մասին, ծրագիր մը որ համապատասխան ըլլայ հայ մոզովընդին ու եւրոպական քաղաքականութեան արդի կացութեանը : Չեմ գիտեր թէ ի՞նչ կրնայ ըլլալ որոշ արդիւնքն այդպիսի համաժողովի մը, բայց նոյն իսկ եթէ բացարձակ ձուլում մը չյաջողի, միշտ մեծ ապէս օգտակար բան մը կատարած կ'ըլլան կուսակցութեանց ներկայացուցիչներն իրարու մօտենալով եւ իրարու հետ խորհրդակցելով. անուագն, կրնան, — եւ պարտին, — համաձայնիլ ընդհանուր ծրագրի մը չըլլայ, եւ խոստանալ իրարու որ այսուհետեւ համաձայնութեամբ գործին, իրարու աջակցին ահեկ պարագայի մէջ, եւ մեծ պարագաներու մէջ միասին շարժին անպատասխան :

Ասի անհրաժեշտ է. ազգը կը սպասէ այս միացման, կը պահանջէ զայն :

Միութիւնը անհրաժեշտ է, ոչ թէ, ինչպէս կարծողներ կան, զոհացում տալու համար այն ամէն բանէ դժգոհ եւ բան մը երեսք չընող կարգ մը Հայերուն, որոնք միութեան պակասը պատրուակ կը բռնեն իրենց ո եւ է կերպով ո եւ է գործի չմասնակցելու վատութիւնը արգարացնելու համար : Այսպիսի տիպարներով վայրկեան մ'անգամ պէտք չէ որ կորսնցնեն ո եւ է գործօն մարմին. բայց գործօն մարմինները պէտք չէ չփոթեն անշարժութեան եւ անկարողութեան ներկայացուցիչները կարգ մը ուրիշ Հայերու հետ որոնց «չէզոք» անունը կուտան, ոչ թէ որովհետեւ ո եւ է զգործունէութենէ հեռու են մնացած, այլ որովհետեւ միջեւ ցարգ չեն պատկանած Հնչակեան կամ Դաշնակցական կուսակցութեան եւ գործած են անխախտի. այդ չէզոք կամ աւելի ճիշդ անխախտ գործիչներուն մէջ (ինչպէս ամէն ազգի մէջ կարելի է գտնել), կան որ անօգուտ չեն եղած ազգային դատին՝ առանց ճակատնուն վրայ կուսակցական անուն մը կրելու : Եւ եթէ այդ անկախ գործիչները կը փափաքին որ յեղափոխական մարմինները միանան, ասի կ'ընեն :

միմիայն այն նպատակով որ մեր ազգային շարժումը, որուն համար իրենց անհատական ճիգը անուզողակի կերպով լրացուցիչ մը եղած է յաճախ, տեղի ունենայ այսուհետև աւելի ընդարձակ, աւելի ճարտարօրէն հաշուուած, աւելի հզօր եւ արդիւնաւոր կերպով մը, հայ ժողովուրդն իր դահիճներուն դէմ պաշտպանելու գործին մէջ աւելի լուրջ, զրական, տեւական ուժ մը յոյց տալու հասնի:

Յեղափոխական մարմիններու միութիւնը, կամ գոնէ համերաշխ գործակցութիւնը, անհրաժեշտ է ուրեմն նոյն իսկ յեղափոխական գործին բարձրագոյն շահերուն տեսակէտով: Ըստի, եւ կը կրկնեմ, որ հայ յեղափոխութեան մեծագոյն խոչընդոտը իր ներքին երկպառակութիւններն են եղած. միութեամբ պիտի դադրին կծու վէճերը, փոխադարձ զրպարտութիւնները, որով մեր այլ եւ այլ յեղափոխական կուսակցութիւնները իրար տկարացնել ջանացած են ակիզքէն ի վեր. միութիւնը պիտի առաջնորդէ մեր յեղափոխականները՝ աւելի շքրջահայցութիւն, աւելի խոհեմութիւն գնելու իրենց գործունէութեանը մէջ. եւ ասկից զատ, միութիւնը մեզի համակրող օտարներու առջեւ մեր ցեղին մէջ համերաշխութեան սգիին բոլորովին բացակայ չըլլալուն ապացոյցը տալով, մեր ցեղին պատիւ բերող երեսոյթ մը պիտի ըլլայ, եւ իր ներքին դժտութիւններէն վհատած, թուլցած, շուարած մեր ժողովրդին ալ խորախոյս ու հաւատք պիտի ներշնչէ:

Աստի՛ եւն այն նկատումները որոնք զիս կը մղեն մեծապէս գովելի գտնելու վեր. Հնչ կուսակցութեան առած քայլը, եւ փափաքելու որ այդ քայլը ազարդիւն չմնայ:

Ա. ՉՊԱՆԵԱՆ



Ք Ի Ի Ր Տ Ը



Շար.

Այսպէս, գոնէ իմ ճանչցած տեղեր, Քրդի եւ Հայու մէջ կար, բացի կենցաղավարական որոշ կապերէն, հողեկցական խմոր մը եւս: Մեր մէջ ներկայացած «կրօնական անջրպետը» մղտատուն ուղիէն մը լինելէ աւելի դարնանային հեղեղատի մը բնութիւնն ունէր, որու անմիտ ազմուկի եւ պզտոր կոճակներու մէջ, աւա՛ղ, թշնամին չէ վարանած միջտ եւ անդադար ձուկ որսալ:

Բայց ի՛նչ, վերջերս թշնամին իր խարդախ միջոցներով մեր այս բարեկամական կապերը գրեթէ ամբողջապէս խլած եւ ատելութեան

աստիճան խտրութեան անդունդ մը բացած էր մեր մէջ: Քիւրտը երկնային պատուհաս մը եղած էր Հայուն եւ մեր քիւրա զբոյններու աջակցութիւնը վայելող հօրեղբորս ընտանիքը հալածուած՝ օտարութեան մէջ հացի պատաններ կը մուրար:



1894-95ի ձմեռն էր: Հինգ տարուայ պանդխտութենէ մը յետոյ բաղդ էի ունեցիր դառնալ ծնողացս գիրկը, մեր դաղթալայր Պուլանըզ գաւառին մէջ: Սասնոյ աղետաբեր դէպքն անցեր էր եւ այն արմտեաց շտեմարան գաւառը լեցուած էր դաւընցի (Պուլանըզցիները Սասունցիքը զաւընցի կը կոչեն) տէրպէտէր ելած ընտանիքներով: Կղեճնագործութեան արհաւիրքն անցած էր ու կը արիւթր ժամանակաւոր խաղաղութիւն մը: Թուրք կառավարութիւնը իր նենգ քաղաքականութեամբ «Արգարութեան հետախոյզ» ուղի մը մթադնելու եւ «Արգարութեան» ձայնն երկբայութեան թանձր մառախուղին մէջ խեղդելու համար, Քիւրտին ներշնչած աւարտութեան եւ արիւնարբութեան եռանդը մեղմացուցած էր: Իր յատուկ երախտագիտութեամբն ուղարկած էր Կարնոյ ծանօթ Միր-Ալայը Հասանան եւ Հայտարան քաջամարտիկ «աչիրաթ»ներուն մէջ, վարձատրելու զանոնք, իրենց մատուցած հայաջինջ մեծ ծառայութեանը համար: Մարգասպանութենէ զատ, ինչ չարիք որ թիւրքն այդ ցեղերու միջոցաւ հասուցած էր Հայուն Միր-Ալային հաւատարիմ գի՛նուորները պատճառած էին Քիւրտերուն: Աւարի, կողոպուտի եւ պատուոյ բռնաբարութեան այնպիսի գործնական դաս մը տուած ու բերաննին այդ քաղցրութիւններով այնպէս մը համեմած էին, որ դժուար թէ կեանքի մէջ մոռցուէր: Գողը գողէն գողացիր եւ յափշտակողը յափշտակողէն յափշտակեր էր, իր առաւել ճարպիկութեան համեմատ: Քրդին կը հարցուէր թէ ինչպէս տարաւ այս ամէն շարիքները, ի՛նչպէս կրցաւ հանդուրժել այս անպատուութեան, եւ ան կը պատասխանէր թէ «Իր պաշտպան, իր հայր ճանչցածն էր իրեն չարիք պատճառողը, ինքը անզօր է անոր առաջ, եւ իր ձայնն անխելի ուրիշներուն:»

Եւ թուրքը այս բոլորը կ'ընէր, իբրեւ թէ իր հլու հպտտակ Հայու վնասները դարմանելու համար: Թէ՛ ինչ բարեխղճութեամբ բաժնուեցաւ քիւրտերէն բերուած աւանը Հայոց

վրայ, այդ արդէն կարեւր է գուշակել, սակայն աւելորդ չեմ համարել, իբրև կրկնութիւն, տեսածս պատմել: Կոնիսեմ ըսել միայն որ եթէ նոյն իսկ ծայրայեղ օրինաւորութեամբ բաժանուժը տեղի ունենար, Հայը պիտի զժկամակէր, պիտի դժուարանար մասնակցել այդ «աչք-կապոցի» խաղին:

Գրամի եւ զարդուց մասին տեղեկութիւն մը չեմ կրնար տալ, որովհետեւ հակառակ անոնց շտապուցիչ փայլին եւ շտապուն հնչականութեան, ո՛չ նշմարուեցաւ եւ ոչ ալ ձայնը եւ լաւ: Իսկ երկվարներն ու նժոյգները, առասպելական թիւերով վաղուց անհետացեր էին արդէն: Մնացեր էին միայն յամբարայտ տաւարներու նախիրներ: Ահա վերջիններս պիտի բաժնուէին Հայոց վրայ:

Տեղւոյն քաղաքական եւ գինուորական պետերը ժողովներ գումարելով կը խորհէին բաժանման արդիւնքի եւ եղանակի վրայ: Առաջին հարցը իր անմիջական լուծումը գտաւ. — չյանձնել Հայու, պիտի կորսնցնէր համեղ պատար: Երկրորդն ալ չվրիպեցաւ անոնց խորագիտութիւնէն, որոշեցին ծախել եւ անով թիւեցնել Հայու մէկ կարեւոր բեռը՝ հարկը: Թէ իսկպէս հայ ժողովրդի այս թեռը որքան թեթեւաւ ատով, յետոյ կը տեսնենք: հետեւինք պաշտօնէից ետանդուն գործունէութեան: Մտտ մէկ շարքով թաթախուած փոշոտ ֆիւթիկներու մէջ, «աժամելի» աշխատութիւնէ մը յետոյ, հարկերու համեմատ(!) թղթերու վրայ բաժնեցին զիւղացիներու մէջ ու յետոյ աճուրդի հանեցին: Թէպէտեւ ձմեռ լինելով թափառիկ թե՛նիւններ չկային, բայց այս գորդեան հանդոյցն ալ վաղուց լուծումը գտած էր: Գատընն եւ գայմագամէն սկսեալ մինչեւ յետին պաշտօնեան «թէճիկ»ներդարձած շնեցին (!) ցրտէն եւ իրենց սուր առամիներէն ճողպրած անասունները: Ու թուրք պաշտօնեան հայրական «յատուկ հողածութեամբ» մը, այս ամէն տաժանելի աշխատութիւններն առանձին ըրաւ, առանց Հայոց «ձանձրոյթ» պատճառելու, առանց զանոնք մասնակից ընելու աշխատութեանց:

Քուրդն ու Հայը, հանդիսատես թուրքի այս եղեռներգակ-կասակերգական խաղին, ափ ի բերան կը դժուարանային գուշակել թաքուն նպատակը: Եւ սակայն ինչպէս ըսած եմ, թուրքը այսպէսով ձամբան կը հորդէր, կը յարդարէր «արդարութեան հետախուզութեան» մը, որ իր մոզական լապտերով պիտի առաջնոր-

դուէր, աւա՛ղ. — Սամոյ «Քննիչ Համաժողովն» էր, որ ձանապարհ ինկած էր գէպ ի Մուշ:

Յունուար 5ին Ս. Մննդեան ձրագալոյցի երեկոյին, Յանձնաժողովը հասաւ Հ. հայաբնակ զիւղը եւ Մկրտութեան առաւօտուն անցաւ Արամանի — Հայաստանի այդ Յորդանանի — վրայէն: Գիւղացու յածուն մտքերուն ծանօթները կրնան երեւակայել թէ այս հաղաւաղիւտ զուգարիպութիւնները ի՛նչ նոր կորով առին անոնց եւ ի՛նչ քաղցր երազներու մէջ ընկղմեցուցին զանոնք: Վարժապետէն ու տիրացուէն սկսած մինչեւ յետին գոհիկը մէկ-մէկ լաւատես մարդարէ էին զարձիւր ու խմբուած արտոններու բազմաբոյր ջերմութեան մէջ, կը գուշակէին եւ կը հաստատէին թէ իրենց գերութեան թիւը — ժամանակը — լրացած է եւ սպասուած «Մեսիաններն արդէն ուղարկուած են «Գթութեան գահեր»էն իրենց փրկարար գերը կատարելու: Այն Արամանին ուր մի ժամանակ մկրտուած ու ազատուած էին «սասանայական գերութենէն», որպէս թու յայտնու երամակ անոր մէջէն անցած ու ճերմակ գառան հօտեր դուրս եկած, այսօր նոր Մեսիանն ու շնորհարեր գալտեսամբ նոյն Արամանու մէջէն պիտի անցնէին «սարկական սեւ լուծով» եւ «ազատութեան լուսեղէն թեւեր զգեցած» դուրս պիտի գային: Ա՛լ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» աւետիսը, «Վարդան վերածնաւ եւ յայտնեցաւ» ի փոխուած էր: Եւ բնութիւնը որ միշտ գուժաբեր կամ աւետարեր հրեշտակ է եղած իր հարազատ որդի զիւղացուն, ինչպէս որ անցեալ պատուհասը նախալրացուցած էր գիտաւոր աստղով մը, այժմ կուզար իր մէկ արտասովոր երեւոյթովն աւետել ապագայ բարութիւնը: Ու իրաւ, այդ դաշտային գաւառն, ուր միշտ կը տիրէր երկարատեւ ցրտաշունչ եղանակ մը, այդ տարին գարունը ապշեցուցիչ կանխահասութիւն ունեցաւ հոն: Դեռ յունուար ամսի մէջ սկսան փոփոխակի անձրեւներ, գարնանային գաղջ ջերմութեան մը հետ: Զիւնը կը սկսէր վերնալ եւ տեղ տեղ աշնացանները իրենց կանաչագոյն ծիւրը կը ցուցնէին ու ապագայ առատութիւն մը կը խոստանային: Այս ամէն բարեյաջող երեւոյթներու տակ փետրաթափ ժողովրդի յոյսը կ'ամբանար եւ քաղցր երազը հետզհետէ իրականութեան կը մօտենար: Գիւղացին այն կարծիքն ու հաւատքն ունէր որ Յանձնաժողովը եկած էր ո՛չ թէ քննիչի պաշ-

տօնով, այլ մոլեհանդ թուրք տարրի խոչընդոտներուն չհանդիպելու համար այդ կեղծ անուան սակ եկամտ էր «Հայութեան անկախութեան հիմունքը գնելու» Կը հաւատար որ ան պիտի մնար այնտեղ պահպանելու ժողովուրդը մինչեւ «Հայկական Իշխանութեան» մը հաստատուին, որ շատ երկար ժամանակի չէր կարօտէր, յաջորդ գարնան իսկ վարդերով պիտի պսակուէր: Հոգեզմայլ տեսիլքներու տիեզերքի մը մէջ էր թաղուած գիւղացին: Կը լսէր, կը տեսնէր եւ կը տարածայնէր որ այդ ձմեռնային եղանակին մէջ իսկ, արդէն ուսակախ րանակ մը սահմանը անցած, Կաթաւին լեռան մէջ ժամանակին կը սպասէր: Կը հաստատէին որ այդ բանակէն վաչտ մը այսինչ գիշեր Տ. հայաբնակ գիւղին է եկած, կանչած է գիւղին քահանան եւ առաջնորդ Հայու մը միջոցաւ յայտնած իրենց նպատակն ու թիթեւ ընթրիք մը ընելէ յետոյ կրկին լեռը քաշուած է: Միւս կողմէն ալ անգլիական եւ Ֆրանսական բանակները մտած են Տիգրանակերտ եւ հետզհետէ ներսերը կը յառաջանան. Տամատեանն ալ խումբ մը ուսաստանցի կտրիճներու գլուխը անցած Գրդու լեռան մէջ է բոյն դրած, երբեմն երբեմն Մշոյ Սեւ լեռները կ'անցնի, Պլընա-ձիա (Բարձր-սար) կուգայ, Թուրքի զիտաւորութեան կը տեղեկանայ եւ ապա իր բնական ամբարտակներու մէջ կը քաշուի: Եւ դեռ այսօրինակ անհայար նախապատրաստութիւններ կը հաստատէր ժողովուրդը իր ազատութեան համար: Ու այս քաղցր տպաւորութեան տակ պանդխտի տէրերը մխիթարական նամակներ կը գրէին իրենց պանդխտին, խորհրդաւոր նախադասութիւններով կը յայտնէին իրենց ներկայ յուսալի վիճակն ու փայլուն ապագան եւ կը հրաւիրէին վերադառնալ եւ արօրի մածը ձեռք առնել: Խոստովանիմ որ ես ալ չփացած տի-

րող ընդհանուր իրարանցումէն՝ հետեւեալ խորհրդաւոր նամակը գրեցի Կ. Պոլսի գտնուող մէկ բարեկամիս, կամենալով նկարագրել երկրին գրութիւնը: —

«Ազնիւ բարեկամ... այս տարի հոս կը տիրէ անսովոր եղանակ մը: Քրդական տոածը այս երկրին համար ալ կը կատարուի՝ «սեհէ քեանուն, բոսպէրէ խօ տա սօսուն ու պէյպուն» (յունուարի տասին, արեւը դարձաւ դէպ ի սօսուն ու պէյպուն): Իրաւ որ այս ընթացքով, քանի մը օրէն, մեր երկիրը «սօսուն» ու «պէյպուն» ծաղիկներով ծածկուած կարելի է տեսնել: Հարկ չկայ աւելցնել որ այս վտղաթաւս ծաղիկներուն անմիջապէս կը յաջորդեն մանուշակն ու վարդը, ապա հաճելի «անթառամը»: Ճանքերը ծլած են արդէն եւ մտրդս կրնայ այժմէն անոնց մոյգ-կապոյտ դոյնի մէջ կարգալ ապագայ բարօրութիւնը: Մաշեցուցիչ սովը թէեւ դեռ կը տիրապետէ, բայց այդ ոչինչ, չկրնար վհատեցնել ժողովրդին: Նայելով լիութիւն խոստացող ցանքին, ան աւելի եւ աւելի կը դօրանայ ծանրացող պատուհասին դէմ: Մեր Տիրոջ խօսքն ալ պէտք է կատարուի՝ «Ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ այլ եւ բտնիւն Աստուծոյ»: Աստուծոյ «բան»երէն մին ալ Յոյան է: Վաղուան բարեկեցութեան յուսովէ որ կը սնանի այժմ ժողովուրդը: Մենք շատ հանդիստ ենք, շնորհիւ մեր ամենողորմ (??!) կայսեր՝ կատարեալ անդորրութիւն կը տիրէ:»


Թէ բարեկամս ինչքան բան հասկցաւ նամակէս, ինձ անյայտ կը մնար. դառնամ թուրք պաշտօնէից եռանդուն գործունէութեան՝ որուն ակամատես եմ եղած:

ԼՕՇՏՍԿ

(Շարունակելի)

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

«Տէյլի Նիւզ»ի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ 20 սեպտ. թուականով. — «Պոլսոյ մէջ լուր կը պարտի որ Ֆրանսա զիմուններ կ'ընէ Պետութիւններուն, որպէս զի տաճկական ելեւմուտքը միջազգային յանձնախումբի մը հսկողութեան ներքեւ առնուր: Պոլսոյ ազգեցիկ Թուրքերուն կարծիքն այն է որ եւրոպական հսկողութիւնը լաւազոյն է քան գործերու արդի վիճակը: Եւրոպացիք կը մտածեն թէ ատի շատ լաւ բան մը կ'ըլլայ Տաճկաստանի համար»



ԱՆՍԶԻՑԻ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիճը կը հրատարակուի ամիսը անգամ մը :  
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 12 ֆրանք (օտար երկիրներ) ,  
 2 տոլար (Ամերիկա) , 5 բուպլի (Ռուսիա) , գեղատեսիլ՝ 10 ֆրանք (Ֆրանսա) , 6 ֆրանք (օտար երկիր-  
 ներ) 1 տոլար (Ամերիկա) , 3 բուպլի Ռուսիա :  
 ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՆԸ ԿԱՆԽԻԿ Է :  
 Ձևագիրները ետ չեն դարձուիր :  
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ յօդուած եւ բաժանորդագիր շրջի՛ւ Նիտե Եալ հասցէին

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՍԶԻՑ»Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս	Պարսն	Չէորդ Մելիք-Կարաբեօղեան
Պաքու . —	»	Ս. Մ. Ծոցիկեան
Կահիրէ . —	»	Թորգոմեան
Ռուսնուք . —	»	Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպէ . —	»	Ա. Տեմիրճիպաշեան
Պուքրէշ . —	»	Արիս Լազար
Դաւրէժ . —	»	Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք . —	»	Կատարեան
Բրովիտէնս . —	»	Նաղարէթ Թաթեոսեան
Ճրեզնօ . —	»	Աւագ Կարապետեան
Իսթ Ուօթըրթաուն .	»	Մանուկ Գալստեան
Ուսթըր . —	»	Երուանդ Յակոբեան
Չիքակօ . —		Ա. Բարակալուրեան
Պոսթոն . —		Կ. Յ. Բարակիլեան